

ՆԵՐՍՈՒՆԵՐԵԿԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԱՐՏԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի, Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ, редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ է Ք օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տոն օրերէն):

Յայտարարութիւնը ընդունվում է ամէն լիզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպեկ.
Տ է Լ է Ք օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Երկարատե, ծանր հիւանդութիւնից յետոյ փետրվարի 14-ին Պարիզում վախճանվեց

ՍԻՄԵՕՆ ՀԱՆՈՒՄԵԱՆ

որի վշտաբեկ այրին Բալիցիա Հախումեան զաւակների հետ՝ յայտնում է ազգականներին և բարեկամներին: Հոգեհանգիստը կատարվելու է կիրակի, մարտի 6-ին, Վանքի մայր եկեղեցում 12 ժամին կէսօրվայ:

(ո. կ.) 2—2

ԲՈՎԱՆԴԱՅԻՆՈՒԹԻՒՆ

Պատերազմական բեմը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Ականատեսի պատմածք. Բագուի աղետի զոհերի օգուին. Նամակ Քիբէ-Հէյրաթից. Նամակ Կարսից. Նամակ Հին-Նախիջևանից. Նամակ Գանձակից. Նամակ Պարսի-գրութեան. Ներքին լուրեր.—ՀԵՌԱՅԻՆՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԲԵՄԸ

Հեռագրները հաղորդեցին, որ Մուկ-դէն վերջնական յետոյ հապոնացիները շտապեցին դէպի հիւսիս և մարտի 3-ի գիշերը վերցրին Տիւրքի քաղաքը: Հեռագրներից չէ երևում թէ ինչ գիշերը ունեն ներկայումս պատերազմող կողմերը և թէ արդեօք ուսումնական զորքերը նորից միացել են թէ ոչ:

Այն հեռագրից, որ ուղարկել է «H. B.» լրագրի թղթակից Տաբուրնու, երևում է, որ Մուկդէնի մօտ եղած ընդհարման միջոցին երկու կողմից եղել է առնուազն երկու հարիւր հազար հոգու կորուստ: Ռուսները ճիշդ տեղեկութիւն չեն ունեցել հապոնական զորքերի շարժումների մասին, ուստի և յանկարծակիի են եկել:

Ռուսական բանակը փետրվարի 24-ին բռնած է եղել Սուլայէ գետի հոսանքի գիծը սկսած Մուկդէնի մօտերէն դէպի արևելք մինչև Ֆուշուն և մի տասնհինգ վերստ էլ հեռու նրանից: Ռուսաց զորքերը գէպի հիւսիս տարածված են եղել մօտ 9 վերստ տեղ: Կուրօպատկինը զորքերը տարել է դէպի այս վերջին կէտը, որպէս զի ապահովել երկաթուղու գիծը, թոյլ չը տայ թշնամուն կտրելու ուսումնական ճանապարհը և նոյն իսկ յետ մղէ թշնամուն դէպի Սինմինսկին:

Սակայն այն ժամանակ, երբ ի կատար էր ածվում այդ ծրագիրը, յանկարծ ջուր է ստացվում, որ հապոնացիները պատ-ռեցին ուսուց զորքի շարքերը: Այդ մի և նոյն միջոցին եղանակը չափազանց անսպասու էր ուսումնական զորքի համար, որովհետև փշուռ էր հարակից սարավանդի մերձիկ փոշիով, որ խփում էր ուսումնական զորքի երեսին: Կուրօպատկինը անկարող գտնվելով օգնել զորքի կտրված մասին և տեսնելով վտանգ, հրաման արձակեց յետ նահանջի դէպի Տիւրքի: Զորքը ճանապարհ ընկաւ չորս ուղիով, ցրիւ գալով դաշտերում. սայլերի և խնդանօթ-ների մի մասը յետ մնաց:

Մուկդէնում և ճանապարհներում ուսումնական զորքը էին պահեստները, շինութիւնները և այն բոլոր իրերը, որոնք կարող էին պէտքական լինել թշնամու համար:

Միայն այժմ յայտնի չէ թէ որտեղ է գտնվում Լիննիլիի զորքը: Կուրօպատկինի յանկարծակի յետ նահանջելու պատճառով Լիննիլիի զորքի գրութիւնը դարձել է շատ դժուարին: Նա ստիպված էր մեծ արագութեամբ 60—80 վերստ անցնել, որպէս զի կարողանայ միանալ Կուրօպատկինի բանակին: Սակայն Կուրօպատկինը չտալով Մուկդէնից դիմեց դէպի Ֆուշուն, որը վերցրեց նա փետրվարի 24-ին: Արդեօք Լիննիլի ընտրել է ինքնուրոյն ուղիներ դէպի հիւսիս, թէ

դիմադրում է հապոնական զորքերին յայտնի չէ:

Ինչպէս յայտնի է հեռագրներից, ներկայումս Լիննիլի շահանկված է ընդհանուր հրամանատար մանջուրական զորքերի վրա, իսկ Կուրօպատկինը արձակված է պաշտօնից:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՐՏԻ Լ

Անցեալ տարվայ վերջերից Ռուսաստանում ընդունված են մի շարք նոր դրութիւններ, որոնք մինչև այդ թոյլատրված չէին: Դեկտեմբերի 12-ի Բարձրագոյն հրովարտակից յետոյ տեղի ունեցան, ինչպէս յայտնի է, մի շարք ուրիշ կարգադրութիւններ, որոնց մէջ նկատվում է Ռուսաստանի ներքին կեանքը նոր հիմքերի վրա վերակառուցանելու ձգտումը: Այդ նոր կարգադրութիւններից մէկն էլ այն է, որ թոյլատրվում է հանրագրքի իւրաւունքը, այսինքն ազգաբնակչութեան զանազան մասերը, ինչպէս նաև հասարակական հիմնարկութիւնները այսուհետև իրաւունք ունեն հանրագրքով դիմելու բարձր կառավարութեան, որոնց մէջ կարող են ընդհանուր պետական հարցերի մասին խօսել: Նայած լրագրական տեղեկութիւններին, Ռուսաստանի շատ հիմնարկութիւններ պատրաստվում են օգտվել այդ իրաւունքից: Բացի զրանից, առանձին ազգութիւնների խմբեր էլ սկսել են դիմումներ անել մինիստրների խորհրդին: Այսպէս, լին ազգի կողմից մի ամբողջ պատգամաւորութիւն գնացել է Պետերբուրգ՝ ժողովրդի ցանկութիւնները արտայայտելու համար: Մի քանի տեղերի հրէական համայնքներն էլ ուղարկում են հանրագրքի, որոնց մէջ նկատվում են հրէական զրութիւնը, խնդրում են վերացնել հրէական իրաւունքը սահմանափակող օրէնքները:

Մեր Կովկասն էլ այդպիսի մի օրինակ ունեց: «Մշակի» մէջ տպվում էր Գուրթայիսի ազնուականութեան պարագրուի իշխան Մերեթիլի մի ամփոփ յիշատակագիրը, որի մէջ կէտ առ կէտ բացատրված էին, թէ ինչ պակասութիւններ կան, որոնք կանգնեցնում են վրացի ժողովրդի մտաւոր, կուլտուրական և անտեսանկար զարգացումը: Կարել չը կայ, որ այստեղ մենք նորից կրկնենք այդ յիշատակագրի բոլոր կէտերը: Կասենք այսքանը, որ ով միանգամ կարդացել է նրան, իսկոյն զգացած կը լինի, որ իշխան Մերեթիլին խօսում է ճիշդ, վերին աստիճանի էական, ամենակարևոր կարիքների և ցանկերի մասին: Եւ թէ եթէ փորձէք հարց տալ թէ ինչ կասէր Կովկասում բնակվող ամեն մի ազգութիւն, եթէ նա էլ սկսէր իր կարծիքը բացատրել, դուրս կը գայ այն համատարած իրողութիւնը, որ ամեն տեղ, մեր երկրի բոլոր անկիւններում ամենքը, խորապէս համակրելով իշխան Մերեթիլիի մտքերին, կասէին, որ մի և նոյն միջոցները, որոնք ցանկալի են համարվում վրաց ազգի համար, պէտք է գործադրել կովկասեան բոլոր ազգերի վերաբերմամբ: Եւ սա շատ բնական է: Մենք ամենքս, բոլոր ազգերս, ապրում ենք միանման հանգամանքների ազդեցութեան տակ, միանման մթնոլորտ է ճնշում ամենքիս: Ուստի վերին աստիճանի խոշոր, կենդանաբար գործ կը լինէր ամբողջ Կովկասի համար, եթէ բարեացակամ, հաշտեցնող քաղաքականութեան հիմք ընդունվէին այն սկզբունք-

ները, որոնք բացատրված են իշխան Մերեթիլի յիշատակագրի մէջ: Այս ցանկութիւնը, որի շուրջը միակամ ու միաբան կը համախմբվեն մեր երկրի ազգաբնակչութեան բոլոր տարրերը, արտայայտում է «Нов. Обозрение» լրագրից:

Գուրթայիսի սղնուականութեան պարագրուի ամբողջ երկրի ցանկութեան արտայայտիչ հանդիսացաւ. «պետական բարեացակամ քաղաքականութիւն», զմտւոյն հիմնարկութիւններ, երդուհանգրիւ դատարան, դատարանի մատչելիութիւնը ազգաբնակչութեան, օրինականութիւն կառավարութեան մէջ, անձի անձնական իրաւութիւն, մամուլի ազատութիւն և այլն,—այս բոլորը հաւասարաշարժ հարկաւոր է մեր երկրի բոլոր անկիւններին: Ռուսաստանի բարեւոր կրթութիւնը, որ նրա իւրաքանչիւր մասը ապրէր կատարելալ կեանքով, զարգացնէր իր ոյժերը: Ժամանակ է ձեռք վերցնել այն կորստաբեր հայեացքից, թէ Ռուսաստանի բուն ազգաբնակչութեան երջանկութիւնը պահանջում է սահմանափակել ծայրերի բնական իրաւունքները:

Այդ «կորստաբեր հայեացքը» արդէն բաւական պարզված է պետական ղեկավարող շրջանների համար էլ: Մնում է, որ ազգաբնակչութիւնն էլ օգտվի իրան տուած իրաւունքից և անկեղծ ու սրտաբաց դիմումներով յայտնէ իշխանութեան իր կարիքներն ու տենչանքները: Զը պէտք է մոռանալ, որ Զուտով մեզ մօտ կը գայ նոր փոխաբան, որին Բարձրագոյն կամքով յանձնարարված է հասարակական բարեմիտ ոյժերի աշակցութեամբ գործել: Կովկասը խաղաղ բարեկեցութեան շաւղի մէջ գնելու համար:

ԱՎԱՆԱՏՍԻ ՊԱՏՄԱԾԸ

(Նամակ Բազուից)

Փետրվարի 7-ին, առաւօտեան 9 ժամին, ես դուրս եկայ տանից, մի բարեկամին հետ, հարկաւոր գործի համար: Ծանապարհին մենք լսեցինք ատրճանակի ձայներ, որոնց մենք նշանակութիւն չը տալով, շարունակեցինք ճանապարհներս: Բայց որքան առաջ էինք գնում, այնքան ատրճանակի և հրացանների ձայները աւելի է աւելի սաստկանում էին: Ես այն ժամանակ նոր յիշեցի, որ 1) իմ թուրք տանիքը երէկ ինձ զգուշացրել էր. թէ վաղը տնից դուրս չը գաս և 2) երէկ մեր հարեան հայի խանութում նստած ժամանակ՝ նրա մի ծանօթ թուրք եկաւ և ասաց, որ երկու օր խանութը կողպած պահէ: Հասնելով թուրքաց վաճառանոցը, որը ընկնում էր մեր ճանապարհի վրա, մենք սարսափահար տեսանք վաճառանոցի բոլոր խանութները կողպած, իսկ խանութներին առաջ թուրքերը խուռ կանգնած, ատրճանակները ձեռքերին, իսկ այստեղ այնտեղ ընկած հայերի դիակներ, անկասկած թուրքերի գնդակներից ընկած: Այս զարհուրելի տեսարանից մենք կայծակի արագութեամբ շտապեցինք դէպի Պարսիկ, որը այնքան հեռու չէր վաճառանոցից և որտեղ կանգնած էին հարիւրաւոր կողակներ, որոնք ներկայութիւնը, ըստ երևոյթին, չէր խանգարում ամենին թուրքերին շարունակել իրանց յանդուգն բարբարոսութիւնները: Հասնելով Պարսիկ, մենք տեսանք, որ հայերի բոլոր խանութները կողպատած, խանութպաններից շատերին աջով իջել էր փակել խանութը և շտապել տուն, իսկ որոնք չէր աջով իջել, նրանք էլ ներսը ամբարձր էին և պատառաւով նրա մէջ: Մենք էլ շտապով մտնեք մի կողմակարի կիսաբաց խանութ, որը կողակներից 20—3) բայլ հազիւ հեռու լինէր:

Մանուկները պատառաւով անցանք պատմեցին, որ կողակներին ներկայութիւնը ամենին չէ ներգրծում գաղանացած թուրքերի վրա և որ հէնց մի քանի րոպէս աւանդ առաջ, նոյն խանութի առաջ, մայթի վրա թուրքերը սպանեցին մի երկու հայի և որ կողակները այս սարսափի ոճրագործութեան վրա նայեցին սառնասրտութեամբ: Զը նայած թուրքերը բռնուտի տարել են վերայիշակ

այս զարհուրելի պատմութիւններին, ես վրաստահացալ դուրս գալ այդ խանութից և տեսնել ինչ է կատարվում շուրջը: Դուրս գալով խանութից և կանգնելով մայթի վրա, ես տեսայ, որ թուրքերի կատաղած խուռները, զրահաւորված ատրճանակներով և սուրերով, գոռում գոչումով վազում են այս կողմ ու այն կողմ «աղա», էրմանդը վուրուն: Այդ միջոցին ես ամենին չէի կարողանում ինքս ինձ բացատրել, արդեօք սա երազ է, թէ իրականութիւն: Կողակարի խանութից ես արագ անցայ և մտայ մի դերձակի խանութ Յիգիանօվսկի փողոցի վրա: Գոռում-գոչումը և ատրճանակների ձայնը դնալով աւելի և աւելի սաստկանում էր: Մենք պինդ փակվեցինք խանութում: Այդ միջոցին կողակների ձիերի ոտնաձայն լսեցինք, և ուրախացանք, որ վերջապէս ազատվեցանք մահից, սակայն դժբախտաբար խանութում եղողներից մէկը գլուխը դրան ձեղրով հանելով, մեղ համար գոյժ բերեց, թէ թուրքերը կողակների անցնելուց յետոյ կոտորում են այն խանութները դուրսերը, որոնց վրա կողպէք չը կայ: Արդարև շատ կրիտիկական էր մեր դրութիւնը, որովհետև այն խանութը, որի մէջ մենք պատառաւով էինք, միայն մի դուռն ունէր դրսից, հետեւաբար չարագործների մեր խանութի վրա յարձակվելու ազատվելու միջոցից դուրի:

Մի քանի րոպէից յետոյ դարձեալ երևաց զօրքի մի խումբ, և ես օգուտ քաղելով յարմար միջոցից, դուրս թոյլ խանութից և վազեցի Նիկոլաեվսկի փողոցը, որը 50 բայլ կաւոր էր հեռու լինել այնտեղից և որտեղ հաւաքված էին մեծ բազմութիւն հայերի, որոնք բոլորովին կողքած իրանց, չը գիտէին ինչպէս զգնել իրանց տուած Որովհետև իմ ճանապարհս էլ այդ փողոցով էր, ուստի ես էլ խանութից այդ խմբի հետ և մենք ահով և սարսափով շարունակեցինք ճանապարհներս Նիկոլաեվսկի փողոցով: Նիկոլաեվսկի փողոցից ծովելով, մտանք Կրասնօ-Կրեստօվսկայա փողոցը, ես նկատեցի, որ իմ բոլոր ուղեկիցները ճանապարհին բոլորն էլ մտան իրանց տները և ես ահով ու սարսափով միայնակ շարունակեցի ճանապարհս Կրասնօ-Կրեստօվսկայա փողոցով և երբ հասայ նոյն փողոցի վրա գտնվող Մամալիանի տան մօտ, երկու ուսուկանաք առաջ կարեցին և լալով ասացին. «մի գնաք վերև, ի սէր Աստուծո, մեղք են ձեր երեխայը, եթէ թուրքերը ձեզ ստանան, իսկոյն կը սպանեն. այ, մտիկ տուէք դէպի վերև»: Կրասնօ-Կրեստօվսկայա փողոցը վերջանում է «Միկիտեանցի» շինութիւնով, որի առաջ գտնվում է մի փոքրիկ հրապարակ, իսկ նրանից վերև բարձրանում է Զաւարաբանդի դառիվայը, որի վրա բնակվում են բացառապէս թուրքեր: Երբ որ ես նայեցի դէպի վեր, ինչ եմ տեսնում, տէր Աստուծո, Զաւարաբանդի դառիվայը, հրապարակից վերև, հաւաքված են 400—500 թուրքեր, իսկ հրապարակի վրա սկսել են տալիս մի քանի իրեր: Ես ուշ ուշով նայելով տեսայ, որ դրանք դիակներ են և նրանցից մի քանիսը դեռ շարժվում են: Այս միջոցին երևացին մի խումբ զինուորներ, որոնք գնում էին դէպի վերև, անկասկած դէպի դիակների մօտ, ես խանութից այդ զօրքի հետ, որովհետև իմ բնակարանս էլ հէնց այնտեղ էր գտնվում: Ես ուրախացայ, որ մեր թաղը զինուորներ են գալիս և մտաւորապէս հրճվում էի, թէ հաւանորները կը հասնեն և թուրքերից, որոնք այդ ամենի զոհերին նահատակել են, մի քանիսն կը կրակեն: Սակայն, երբ հասանք ադալտի տեղը, իմ յոյսերս իզուր անցան, զինուորները շրջապատեցին դիակները և ամբոխին սկսեցին ցրվել՝ առելով. «Гра-зоидитесь господа»: Ես աճապարեցի իմ բնակարանը, որը մօտ էր այնտեղից և այնտեղ իմացալ զրացիներից, որ մեր կից նոր մեծ շինութեան մէջ բանող 9 հատ հիւանդներն թուրքերը բռնուտի տարել են վերայիշակ

հրապարակը և այնտեղ հրապարակապէս նա-
հատակել:

Ս. Լալարէկեանց

ԲԱՆԴՈՒԻ ԱՂԷՏԻ ԶՈՆԻՐԻ ՕԳՏԻՆ

Ստացանք. 1) Տիգրան Շերմազեանից մի
փոքրիկ ընտանեկ. շրջանում հաւաքած 14 թ.
5 կ., 2) Հ. Ա. Ղազարեանից 50 կ., 3) Այգե-
հատ գիւղի հասարակութիւնից 10. Շալիք-
դեանի ձեռքով հաւաքած 7 թ. 50 կ., 4) Կը-
րիմսկայ գիւղից Պոլոս քան. Տէր-Միսաեան-
նի ձեռքով հաւաքած 71 թ. 85 կ., 5) Գան-
ձակից Աղայեանի ձեռքով հաւաքած 60 թ.,
6) Կազդուանից Ս. Ղազարեանի ձեռքով հա-
ւաքած 91 թ. 54 կ., 7) Կազդուանից Ա. Անա-
րոնեանի և Ս. Գանանեանի ձեռքով մի խումբ
համակողմանից հանգանակած 11 թ., 8) Լո-
զովայա Պալլովկայից Ս. Առաքելեանից 5 թ.,
9) Մարտիրոսեանից 4 թ. և Ա. Օրդուեանից
1 թ., 9) Դիլիշեանից Գ. Ասլանեանի ձեռքով
հանգանակած 100 թուրքի, 10) Արքայաձա Ղա-
զանձեանից (Ստաւրոպոլ) 10 թ., 11) Պետրոս
Քիֆարեանից (Ստաւրոպոլ) 10 թ., 12) Երե-
նիստօրֆից Ալ. Մամիկոնեանի ձեռքով հաւա-
քած 50 թ. 5 կ., 13) Շորպալանի արհեստա-
ւորներից Արշ. Թեյաբեանի ձեռքով հանգա-
նակած 7 թ., 14) Պ. Կարապետեանից, Ե. Կա-
րապետեանից և Ս. Գիւլնապարեանից (Վա-
ղարշապատ) 3 թ., 15) Սուրբաբից, Յովսէփ ա.
քան. Առիճեանի ձեռքով հանգանակած 71 թ.
35 կ., 16) Ալեքսանդրօպոլի «Արմենիա» ձա-
շարանից 10 թ., 17) Նոր-Մարգեանից Ս. Մի-
քայելեանի ձեռքով հաւաքած 72 թ., 18) Նա-
հապետ Ալեքսանեանից (Լեւաշի) 1 թուրքի,
19) Բժ. Ա. Միլիքեանից (Լեւաշի) առաջնորդար-
մասնաժող. յանձնելու համար 15 թ., 20) Ե-
ղիշէ վ. Սուրբաբեանից (Օրենբուրգ) առաջն.
մասնաժող. յանձնելու համար 10 թ., 21) Տեմ-
նիկովից Կ. Դրեղորեանից (առնց դաւանանքի
խորհրդի) 2 թ., 22) Արտիկ Կայաթ Մա-
րութեանի ձեռքով հանգանակած 38 թ., 23)
Աննա Սուրբաբեանից (Միւնխեն) 5 թ., 24)
Զուլֆայից (Երևանի նահ.) Մնացականեանի
ձեռքով մի խումբ հայերից հաւաքած առաջն-
նորդ. մասնաժողովին յանձնելու համար 46
թ., 25) Աղլիբից Բ. Պետրոսեանի ձեռքով
հանգանակած 37 թ. 30 կ., 26) Ստաւրօպոլից
Սահ. քան. Տէր-Յովհաննէսեանի միջոցով հան-
գանակած մի խումբ մրգավաճառներից 31 թ.
40 կ., 27) Սարաթովից Աւագ Հալալբերդեանի
ձեռքով հաւաքված 68 թուրքի: Ընդհանուր
գումարը նախկին ստացածների հետ միասին
13584 թ. 80 կ.:

ՆԱՄԱԿ ԲԻԲԻ-ՀԷՅԲԱԹԻՑ

Փետրվարի 26-ին

Ոստեք և մենք Բագուի արուարձանում—Բի-
բի-Հէյբաթում—պատանաճների մասին: Բա-
րեբախտաբար և համեմատաբար այստեղ խա-
ղաղ անցավ, թէև բացի ստուգար մուտքովան
բանտներից ունենք հարեան ամբողջապէս
թիւրք Բիբի-Հէյբաթ գիւղը: Նախահանքերի
ծայրերում, դէպի գիւղը տանող ճանապարհ-
ին, իրանց բնակարաններում, գիւղերը սպան-
վել են 3 հայ քարհաններ (կիր պատրաստող)
1 հայ և 1 ուսու կողակարի աշակերտներ և
ցերեկը՝ անցորդ մի հայ: Կոտորածը հաւանա-
կան է լայն չափ կրնդունէր, մասնաւոր կո-
ղպտելու էլ բան կար, բայց հայ բանտորա-
կանութեան բռնած դիրքը փրկեց շատ բան:
Մեր դրութիւնը աւելի բան կիրառական էր.
մի կողմից քաղաքը օգնութեան կարիք ու-
նէր, միւս կողմից՝ որ և է փոփոխութիւն
տեղական ոյժերում, առիթ կը տար և ազդա-
նշան կը լինէր թիւրքերին յարձակվելու ան-
գէն բանտորների վրա: Պէտք է նկատել, որ
թիւրք գործարանատէր Մուխտարովի պա-
րագապատ բակում հաւաքվել էր մի ստուգար
բազմութիւն, որը ամեն կերպ սպառում էր
հայ բանտորների համբերութիւնը: Թիւրքերը
նոյն իսկ կառուցել էին աղիւսից պատնէշ-
ներ: Հայ բանտորները նշանակեցին հրապա-
րակական ժողով, որ 200 բանտորների առաջ
լուսաբանվեց քաղաքին օգնութիւն հասնելու
խնդիրը: Պարզվեց, որ անհնարին է մտնել
քաղաք և նոյն իսկ ապարդիւն, որովհետև
Բայրովում և դօկերի մօտ ոստիկանու-
թիւնը զինաթափ է անում: Վճովեց՝ բռնել
պաշտպանողական դիրք, նախադարձակ չը
լինել, ոչնչով չը խանգարել կարգը, իսկ գի-
շերները հայ պահակներ դնել բնակարանների
մօտ: Երկու օրից յետոյ եկաւ հաշտութիւնը:
Կտրված լինելով քաղաքից, մենք, Բիբի-Հէյ-
բաթիցիներս, թէև համոզված ենք շատ բանե-
րում, բայց անգոր ենք փաստերով խօսելու:
Թուում է թէ հաստատել դատարանի
առջև ոստիկանութեան արածները՝ նշանա-
կում է պարզել շատ բան: Այս մտքից դրդ-
ված՝ յայտարարութիւն եմ տուել դատախա-

ղին ինձ վկայ կանչելու համար: Թող բոլոր
կողովապետները իջնեն ասպարէզ:

Դ. Տէր-Դանիելեան

ՆԱՄԱԿ ԿՈՐՍԻՑ

Փետրվարի 28-ին

Բագուի աղետալի դէպքերը ցնցող տպաւո-
րութիւն գործեցին մեզանում: Առաջին իսկ
օրից ժողովուրդը ահ ու սարսափի մէջ ըն-
կաւ. ինչ կը լինէր մեր դրութիւնը, եթէ նոյն
ստակալի դրաման մեղանում ևս կրկնվէր: Թէ
հայ, թէ պարսիկ և թէ թուրքերը մտածում
էին պատրաստվել ինքնապաշտպանութեան.
Թուրքերը մի խնդիրով դիմեցին տեղիս նա-
հանգապետին և ինքնապաշտպանութեան հա-
մար գէնք խնդրեցին, իսկ պարսիկները առ-
այժմ հանգիստ են, բայց և այնպէս ժողովուրդի
լարված դրութիւնը չէ հանգստացել: Շրջա-
կայքի և Աղբաբայի կողմերից լուրեր էին
գալիս, թէ թուրքերը շատ գրգռված են և
մտադիր են զինվելու: Այդ բանը մեծ երկուղ
պատճառեց քաղաքի և շրջակայ հայ ազգա-
նախկութեանը, որը սրտատրոփ քաջ առ քաջ
սպասում էր յարձակումի. բայց շնորհիւ ժո-
ղովրդի բանխմաց և ազդեցիկ լանձնաւորու-
թիւնների, շուտով հաշտութեան պայման
կապվեց:

Փետրվարի 18-ին առաւօտից մինչև ժամը
12-ը քաղաքիս բոլոր խանութները փակ էին.
Ժողովուրդի խումբ բազմութիւն հաւաքված էր
պարսիկների մղկիթում, ուր ասեղիցելու տեղ
չը կար. մեծամասնութիւնը գաւթում և փո-
ղոցում մնաց. ներկայ էին հայեր, պարսիկներ,
թուրքեր, ռուսներ, վրացիներ, ժողովուրդի բո-
լոր խաւերից. բացակայ էին միայն յոյները:

Ժամը 10-ին հողհանգիստ կատարեցին
մօլլաները. մաղթանքից յետոյ խօսեցին երկու
մօլլա, Անիի վանահայրէջարդապետը, պ. ոս-
տիկանապետը և մի հայ ուսուցիչ. ամենքը
բերանից լսվում էին հաշտութիւն, համեաշ-
խութիւն, եղբայրութիւն, միութիւն ցանկալի
բառերը: Լաւ տպաւորութիւն թողին մօլլա-
ների քարոզները. շատերը արտասուում էին:
Այսպէս վերջացաւ այդ օրը հաշտութեան հան-
գէտը. ժողովուրդը միմիկարված սրտով հեռա-
նաւ մղկիթից, և հանգիստ կերպով բանալով
խանութները՝ շարունակեց իր ամենօրեայ
պարագածները:

Հետեւեալ շաբաթ օրը, փետրվարի 19-ին,
նոյնպէս խանութները փակ էին, նոյնպէս
խումբ բազմութիւն հաւաքված էր հայոց ս.
Աստուածածին եկեղեցում, գաւթում և հրա-
պարակում: Սկսվեց հողհանգիստ. խօսեցին
քարոզներ, ճառեր: Հանգէտը լաւ տպաւորու-
թիւն թողեց ամբողջ ժողովուրդի վրա. ներկայ
էր այստեղ և ուսու հողհաւրականութիւնը.
դժբաղդաբար բացակայ էր հայ-կաթօլիկ հո-
գեւորականութիւնը, ինչպէս և փայլում էր
դարձեալ իր բացառականութեամբ և մղկիթում,
թէև պաշտօնապէս նա հրաւիրված էր: Սրտի
ցաւով այստեղ պէտք է յիշել, որ կաթօլիկ
հողհաւրականութիւնը գրաւոր կերպով հրա-
ժարվել էր ներկայ լինել այդ հողհանգիստին,
պատճառաբանելով թէ «մենք առանց մեր
բարձրից թոյլտուութիւն ունենալու, իրաւունք
չունենք օտար եկեղեցի յաճախել»: Այս բանը
մեծ դարյոթ առաջացրեց կաթօլիկ ժողովուրդի
մէջ, որը և կիրակի օր, փետրվարի 20-ին,
հաւաքվելով առաջնորդարան՝ բողոքեց, հաս-
կացնելով նրանց, թէ որպիսի չարքներ կա-
րող է ծագել այդպիսի հին մեթօդներից: Մի
և նոյն ժամանակ նրանք ասացին, թէ մենք
ձեզ հետ չենք ապրում, այլ ժողովուրդի հետ,
դրացու հետ, որի հետ մենք միշտ հաշտ և
համեմատաբար պիտի լինենք, ուրեմն ձեռ
այդ վարմունքը չէ կարող բաժանել մեզ մեր դա-
ցիներէից, ապացոյց այդ բանին այն, որ երէկ
և առաջին օրը հանդէսներին ներկայ էր կա-
թօլիկ ամբողջ համայնքը, բացի դրանից նը-
րանք միջից ճառ խօսողներ էլ կային:

Աւելացնենք, որ ժողովուրդի ցանկութեամբ
հայր Կ. վ. Դիւրբիկեան մի ֆրանսերէն հե-
ռագրով խնդրեց Կ. Պօլսի կաթօլիկները պատ-
րիարքին և հրաման ստացաւ կատարել Բա-
գուի անմեղ զոհերի համար հողհանգիստ, ո-
րը լինելու է երէկ, փետրվարի 27-ին, բայց
չը գիտեմ ի՞նչ պատճառով տեղի չունեցաւ:

Մ. Ոսկանեան

ՆԱՄԱԿ ՀԻՆ-ՆԱՍԻՋԵՆԱՆԻՑ

Փետրվարի 25-ին

Տեղիս քաղաքագլուխ Զաֆար-Ղուլի-խանը
իր տան մէջ հայ ու թուրք ազդեցիկ

մարդկանցից մի երեկոյթ կազմեց, ուր խօ-
սեցին հայր Գարեգինը և ապա մանեղաւան-
ների կողմից յայտնի հետաք, մեծահոգե-
Շէյխ-Քեարմը համեաշխութեան և եղբայ-
րութեան մասին: Նոյնը կրկնվեց և ուխտվեց
տեղիս զապիթ, ազդեցիկ մօլլաների և հասկա-
ցող անհատների կողմից, նոյնպէս և տանտէրի
կողմից: Ապա հարիւրից աւելի բազմու-
թեան միջից մի մասնաժողով կազմվեց, քա-
ղաքագլուխ Զաֆար Ղուլի խանի նախագա-
հութեամբ ու Շահբազ, Ասադ, Բէգլար Պիս-
գիրիկների աղաների և Կ. Աղանեանի, Մահ-
տեսի Ս. Եղիզարեանի, Մահեսի Ա. Պար-
զեանի, Պ. Իսախանեանի և ուրիշների ան-
գամութեամբ և այդ յանձնաժողովի վրա պար-
տականութիւն դրվեց հսկել քաղաքացիների
խաղաղութեան ու եղբայրական համեաշխու-
թեան վրա, որի գոյութիւնը հաղորդվեց հե-
ռագիրներ ուղարկելով զանազան կողմեր:

Հետեւեալ օրը հայերի ու թուրքերի հազա-
րից աւել բազմութիւնը հաւաքվեց մղկիթում,
ուր թուրքերի սգալիւթեան առաջին օրն էր,
որտեղ դարձեալ ազդեցիկ Շէյխ Քեարմի ան-
նման քարոզը լսեց, ապա նորից հայր Գարեգինի,
քաղաքագլուխի և միւսների եղբայրական կոչը,
իսկ ս. Վարդանանց տօնի օրը, այդ նուիրա-
կան յիշատակին, թուրք և հայ հազարի մօտ
խիտ բազմութիւն հայոց տաճարում՝ մոմերը
ձեռներն առած, ընդհանուր հողհանգիստից
յետոյ, լսեց հայր Գարեգին վարդապետի հրա-
շալի քարոզը, յետոյ Շէյխ Քեարմի հմայիչ
խրատականքը եղբայրական սուրբ կապով
կապվելու վերաբերմամբ: Բաղաբազուրի՝ Զա-
ֆար Ղուլի-խանը սանց թէ՛ թէպէտ հայր
սուրբը և Բոյուք-խանը եկել են նախկինան-
ցիներին մէջ եղբայրական կապ հաստատելու,
բայց նա աներկբայ է, որ աւելի շուտ նրանք
այստեղից պիտի տանեն այն եղբայրական
սուրբ սիրով կապի դադարները, որը կար և
ընդունով պիտի մնայ Նախկինանում հայ ու
թուրք եղբայրների մէջ: Ապա թուրք հողե-
ւորականութիւնը հիւրասիրվեց առաջնորդա-
րանում, ուր միաձայն վճովեց թուրք ու հայ
հողհաւրականներ ուղարկել գիւղերը նոյնը քա-
րոզելու, որը իսկոյն իրագործվեց ու հեռա-
գրով յայտարարվեց Թիֆլիս, Բագու, Գան-
ձակ, Երևան, Օրդուբադ, Էլմիստին:

Մահեսի Ա. Պարզեանց

ՆԱՄԱԿ ԳՆՆԱՍԻՑ

Ժողովրդական ուսուցիչների նախապատրաս-
տութեան մասին

Անցեալ յունվարի սկզբներում Գանձակի
ժողովրդական դպրոցները ուսուցիչները խոր-
հրդակցութեան էին հրաւիրված նոյն դպրոց-
ների պ. դիրեկտորի մօտ: Ուրհորդակցութեան
առարկան էր ժողովրդական դպրոցների ու-
սուցիչների նախապատրաստման հարցը, որի
մասին կարգապահները զեկուցումներ ու տեղի
ունեցաւ մտքերի փոխանակութիւն. զեկու-
ցումները երկու հատ էին. մինը կազմել էր
գիրեկտորը, միւսը տեղական քաղաքային
դպրոցի ուսուցիչներից մինը:

Թէ զեկուցումները հեղինակները և թէ միւս
ժողովականները ընդգծում էին այն, որ մեր
ժողովրդական դպրոցները ուսուցիչները, մա-
նաւանդ գիւղական դպրոցների ուսուցիչները,
ընդհանուր առմամբ սահմանափակ կրթու-
թեան տէր անձինք են, իրանց կոչման հա-
մապատասխան հարուստ գիտական ու ման-
կավարժական պաշար չունեն և այդ պատճա-
ռով անկարող են լինել բաւարարութիւն
տալ իրանց պատասխանատու կոչման պա-
հանջներին, որոնք զնալով բազմաճանաչ, բարդ-
վում են տարեցատարի, իրանց ծանրութիւնը
աւելի ու աւելի զգալ տալով ուսուցիչներին:
Ժողովուրդը բնակաւայաբար պահանջում է ու-
սուցիչներից լոյս, մտաւոր անունը ոչ միայն
մանուկներին, դպրոցի սաներին համար, այլ և
հասակաւորներին, այլ և ամբողջ իր ժողովը,
մասնային համար, պահանջում է նրանցից գա-
ղափարական հասարակական գործունէութիւն,
զաստիարակութիւն իր համար, ուսուցչութիւն
այս բառի ամենալայն մտքով, իսկ նրանք ան-
կարող են կատարել այդ պահանջները, քանի
որ անգոր են, անգոր են ոչ թէ այն պատճա-
ռով, որ գուրկ են իրանց կոչման ըստ արժան-
ւոյն ծառայելու բարի ցանկութիւնից, ոչ, այլ
այն, որ չունեն լաւ ուսուցչութիւն անելու
համար անհրաժեշտ կրթութիւն, լայն, բազ-
մակողմանի կրթութիւն, չեն ստանում կա-
տարեալ նախապատրաստութիւն: Այդ կողմից
գիւղական դպրոցները ուսուցիչները, հետեւա-
բար նաև գիւղական դպրոցներն ու գիւղերը,
աւելի անբախտ են, քան քաղաքային դպրոց-

ների ուսուցիչներն ու քաղաքները:

Զեկուցումները հեղինակներից երկրորդը Ժո-
ղովի ուղարկութիւնը հրաւիրեց այն բանի
վրա, որ ժողովրդական դպրոցների համար,
քաղաքային ու գիւղական, ուսուցիչներ ու
ուսուցչունները պատրաստող դպրոցները, ու-
սուցչական ինստիտուտը, սեմինարիաները և
իդական գիմնազիաները, որոնք դեռ զեկա-
վարվում են 60-ական թւականներին վերջե-
րում կազմած ծրագրերով, բաւականին յետ
են մնացել ժամանակի պահանջներից, ուսու-
նակարող են այսուհետև այդ պահանջներին
բաւարարութիւն տուող ուսուցիչներ պատ-
րաստել: Այդ դպրոցներից դուրս եկած ուսու-
ցիչներն ու ուսուցչունները 20—30 տարի
առաջ իրանց ժամանակի պահանջների տե-
սակէտից լաւ, բաւարար ոյժեր են եղել, իսկ
այժմայիս պարագիծները թոյլ, աննշան ոյժեր են,
քանի որ ժամանակակից կեանքի պահանջնե-
րը շատ բարդ են ու շատ մեծ: Այդ պատճա-
ռով վերոյիշեալ դպրոցների ծրագրերն
պէտք է ենթարկվեն հիմնովին վերաբնութեան
ու փոփոխման. նրանք պէտք է վերանորոգ-
վեն այնպէս, որ անհամեմատ աւելի լայն ու
կատարեալ կրթութիւն տան իրանց սաներին,
սպազալ ուսուցիչներին:

Ժողովրդական ուսուցիչներ ու ուսուցչու-
հիներ պատրաստող դպրոցները պէտք է ու-
նենան մի ընդհանուր տիպ ու լինեն երկու
կարգի՝ միջնակարգ ու բարձրագոյն: Չը պէտք
է լինեն առանձին-առանձին գիւղական ու-
սուցիչներ պատրաստող դպրոցներ ու քաղա-
քային ուսուցիչներ պատրաստող դպրոցներ,
առաջինները իրանց ծրագրերով փոքր, սահ-
մանափակ, իսկ երկրորդները մեծ նրանցից:
Թէ գիւղերին և թէ քաղաքներին պէտք է տալ
լաւ պատրաստված ուսուցիչներ, անպայման
բաւարար, բազմակողմանի լուրջ կրթութիւն
ունեցող, գիւղը քաղաքից աւելի մեծ պա-
հանջ ունի կրթութեան, գիտութեան, լոյսի.
ապացոյցներ այդ բանի համար հարկաւոր չեն.
այդ ճշմարտութիւնը շատ պարզ է ու հասկա-
նալի: Այդ պատճառով ուսուցչական միջնա-
կարգ դպրոցը պէտք է լինի մի տիպի, ժա-
մանակակից հոգով կազմած ծրագրով: Այդ
միջնակարգ դպրոցի տուած կրթութիւնը չը
պէտք է անպայման բաւական համարել ժո-
ղովրդական ուսուցչի համար: Միջնակարգ
դպրոցն աւարտելուց յետոյ նա պէտք է իր
առաջ բաց ունենայ բարձրագոյն ուսուցչա-
կան դպրոցի դռները: Վերջինս պէտք է ան-
պայման մտնելի լինի բոլոր ուսուցիչների
համար. այդ բարձրագոյն դպրոցը պէտք է
պատրաստէ ուսուցիչներ ոչ թէ միայն միջ-
նակարգ դպրոցների համար, այլ և բուն ժո-
ղովրդական, քաղաքային ու գիւղական դըպ-
րոցների համար:

Ժամանակ է լուրջ մտածել ժողովրդական
խաւերի բազմակողմանի կրթութեան մասին,
ժամանակ է լուրջ մտածել այն բանի մասին,
որ մեր գիւղերն ունենան ոչ միայն միջնա-
կարգ, այլ և բարձրագոյն կրթութեան տէր
ուսուցիչներ: Այդ ցնորք չէ, այլ մի բան, որ
կարելի է հեշտ իրագործել ուսուցիչների վի-
ճակի բարելոմման, նիւթական լաւ վարձատ-
րութեամբ, նրանց համար հասարակական—
պաշտօնական լաւ դիրքի ու գործունէութեան
ազատ պայմանների ստեղծմամբ: Բարձրագոյն
կրթութիւն ստացած բժիշկը իբրեւ գիւղական
բժիշկ, կամ իրաւաբանը, ստանալով քննիչի
կամ հաշտարար դատաւորի օգնականի պաշ-
տօն, ապրում են, որք պահանջում է այդ ի-
րանց պարտօնը, գիւղական շրջանում, գիւ-
ղում ու կատարում այնտեղ իրանց պարտա-
ւորութիւնները. ի՞նչն է ստիպում, գրաւում
նրանց դէպի այդ միջավայրը, ամենից առաջ
ու ամենից շատ՝ լաւ վարձատրութիւնը ու
լաւ հասարակական դիրքը: Եթէ ժողովրդա-
կան ուսուցիչը գիւղական բժիշկի, քննի-
չի, հաշտարար դատաւորի չափ ու-
ճիկ ստանայ, նրանց պէս պատուաւոր հա-
սարակական դիրք ունենայ, այն ժամանակ
մենք գիւղերում անգամ կունենանք բարձրա-
գոյն կրթութիւն ունեցող ուսուցիչներ: Միջ-
նակարգ ու բարձրագոյն կրթութիւն ստեղծել
ես աչքի բաւարձ չունենեմ այժմանը, այլ հիմ-
նովին վերանորոգված, իսկական դպրագա-
րական կրթութիւնը, բազմակողմանի դաս-
տիւրակութիւնը:

Պ. Գիրեկտորը իր ու քաղաքային դպրոցի
ուսուցչի կազմած զեկուցումը, որի մէջ հիմ-
նովին արծարծված են վերեւ բերած մտքերը,
ուղարկել է կովկասեան ուսուցչական
շրջանի հողաբարձուի բարեհայեցողութեան:

Ստ. Տէր-Աւետիքեան

ՆԱԽԱԿ ԽԱՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ախալցխա, մարտի 1-ին

Ժողովուրդի յուզված մտքերը՝ Բագուի և Երևանի եղբայրաբաժան աղետների առթիվ՝ թէ՛ եկեղեցիներում և թէ՛ ամենուրեք խաղաղացնելուց յետոյ և մերովստան զգալի կացութեան և համերաշխ կացութեան սպառնացող զարհուրելի, դժոխքներ ապաւան, մայր եկեղեցու ընկնող հրաւիրեցի աղբարիկ, բարեբաղաւայնոց ուղարկուած թանկեղէն մարգարէի կարեկցելու դաւադիր եղեւնագործութեամբ նահատակվածների սևաբաղդ ընտանիքներին։ Սպասարարագից անմիջապէս յետոյ զգացված բարձրութիւնը լցվում է յաջորդաբար՝ նի դահլիճը, և իսկոյն տեղիս առաջաւորներից մեծ. պ. Գրիգոր Զաթարաշեան առաջնախոյով յայտնում է ընդհանուր բուռն ցանկութիւնն առ ժամայն նուազութեան նախագահութեամբ կատարված տեսնելու այդ սուրբ գործը, և իսկոյն և եթ իւրաքանչիւրը շտապում է դնելու սեղանի վրայ իր եղբայրանէր պատարագը։ Ի դէպ. կազմում եմ արձանագործիւն և ստանում նուիրաբարձները։ — Բացակայների և ցանկացող օտարազգիների համար՝ միաձայն ընտրվում են պ. պ. Միսակ Մուրադեանց և Արթուր Լևոնյանց, իսկ քահանայները, որպէս աջակից, հայր Աբրահամ քահանայ Դադաբեան, որոնք պաշտօնապէս նշանակվելով մեր կողմից, սիրով կատարում են իրանց ստանձնած պարտականութիւնը, հասցնելով նուիրած փողերի քանակը եօթն հարիւր յիսուս և վեց ռուբլի քան և հինգ կոպէկի (756 ռ. 25 կ.) սոյն գումարից բառնալով փոխարկան ծախքը մնացեալ 755 ռուբլի 85 կոպ. ահաւաղիկ սոյն ներկայեալ № 182, 1-ին մարտի տարւոյս փոխարկան թղթով առաքում եմ աղբոր խմբագրութեանը անունով՝ խնդրելով բարեհաճել յանձնելու սրբազան առաջնորդի նախագահութեամբ կազմված և Նորին Սրբութիւնից հաստատված յանձնաժողովին անօրինութեան. նախապէս բաժնալիքով դոյն գումարից հարելու և յիսուս ռուբլի ի նպաստ չուսող արկածախնդրին Երևանից, առաքելով ի բարեհաճ տնօրէնութիւն Տէր Թեմակալ առաջնորդ հայր Կարապետ վարդապետին, Երևան։

Մեծաշուք եմ, որ կը բարեհաճէր ասանջակելու «Մշակի» էջերում երկուողիս հետ սոյն ներկայեալ անուանացուցակը նուիրատու անձերի։ Ի դէպ՝ պարտք եմ համարում յարգանքով յիշեցնելու, որ տեղիս հայ հասարակութեան կողմից՝ նախապէս ուղարկված է հարիւր ռուբլուց աւելի՝ այլ և այլ թերթերի խմբագրութեանց, որպէս և Մշակից՝ գոյն այս նըպատակաւ։

Առաջնորդական փոխանորդ Ախալցխայի՝ Միսն վարդ. Տէր-Մանուէլեանց

Կ. Մարտեան 50 ռ., Ե. Օրբելեան 20 ռ., Գ. Զաթարաշեան 10 ռ., Գ. Բուրուզեան 10 ռ., Ստ. Բաղդիւնեան 10 ռ., Տ. Ստեփանեան 25 ռ., Երբ. Գառ. և Միլը. Գառապարեան 10 ռ., Մ. Մուրադեան 15 ռ., Մ. Կանցեան 10 ռ., Վ. Արապեան 25 ռ., Յ. Հայրապետեան 10 ռ., Ա. Մանուկեան 5 ռ., Մ. Լալիօնեան 2 ռ., Ա. Անիստեան 2 ռ., Մ. Թամարեան 2 ռ., Ս. Անիստեան 2 ռ., Պ. Մակարեան 2 ռ., Վ. Մնացականեան 3 ռ., Ս. Սաֆարեան 50 կ., Գ. Վարդապետեան 1 ռ., Ս. Տախմախեան 50 կ., Գ. Յովակիմեան 50 կ., Մ. Վահիկեան 1 ռ. 50 կ., Ա. Նաղաղորդեան 1 ռ., Ս. Բարսեղեան 5 ռ., Ն. Վարդանեան 50 կ., Վ. Կանցեան 1 ռ., Յ. Իգիթեանեան 1 ռ., Պ. Պալեան 50 կ., Ե. Մնացականեան 1 ռ., Մ. Գալիֆեան 2 ռ., Յ. Միլեդարեան 50 կ., Ս. Սիմեոնեան 50 կ., Մ. Պետրոսեան 50 կ., Յ. Սարգսեան 1 ռ., Ս. Աւետիսեան 60 կ., Գ. Դադաբեան 50 կ., Մ. Իսրաքեան 50 կ., Մ. Բաթանեան 50 կ., Պ. Յակոբեան 1 ռ., Մ. Սաղիֆեան 2 ռ., Պ. Գուրաբեցի 1 ռ., Ս. Ասմարեան 2 ռ., Ա. քահ. Դադաբեան 5 ռ., Մ. Լալաբեան 3 ռ., Կ. Բոգդեան 1 ռ., Յ. Միլեդեան 1 ռ., Գ. Թուրքեան 50 կ., Մ. Պուլսեան 1 ռ., Ա. Միսնեան 5 Մ. Անճելեան 1 ռ., Գ. Չիլ-Ակովեան 1 ռ., Յ. Զարակեան 10 ռ., Գ. քահ. Տէր. Մարտիրոսեան 1 ռ., Ներսէս քահ. Համբարձումեան 1 ռ., Պ. Նոճկանով 3 ռ., Յ. Դադարոսեան 5 ռ., Բ. Ս. Սիմեոնեան 5 ռ., Յ. Մովսիսեան 10 ռ., Յ. Մնացականեան 1 ռ., Մ. Սաղիֆեան 3 ռ., Մ. Ճգմանեան 5 ռ., Մ. Թորոսեան 3 ռ., Գ. Դիլիջեան 2 ռ., Գ. Բուրաբեան 25 ռ., Յ. Կարապետեան 1 ռ., Ս. Լասարապետեան 1 ռ., Գ. Միլեդարեան 1 ռ., Յ. Բիւրեջի-բաղեան 5 ռ., Ա. Պետրոսեան 1 ռ., Ս. Ասմարեան 1 ռ., Յ. Պետրոսեան 10 ռ., Կ. Նալբանդեան 5 ռ., Թ. Զադարեան 1 ռ., Ի. Սարգսեան 1 ռ., Ս. Դադարոսեան 1 ռ., Կ. Անիստեան 3 ռ., մհ. Յակովբ. Արսեան 1 ռ., Կ. Բաղդասարեան 3 ռ., Կ. Վանցեան 2 ռ., Ա. Ասլանեան 1 ռ., Վ. Բէնիկեան 1 ռ., Ս. Միլեդեան 10 ռ., Մ. Զոռապետեան 3 ռ., Ս. Չիլեան 1 ռ., Ս. Սաղիֆեան 1 ռ., Մ. Զեքեան 1 ռ., Վ. Տառախեան 50 կ., Վ. Տառախեան 1 ռ., Մ. Պոյաճեան 50 կ., Բ. Կարապետեան 5 ռ., Բ. Կոստանտինով 1 ռ., Ներսէս վերապետ 5 ռ., Իսա-բէկ Արճառուկ 1 ռ., Յ. Զիլինկարեան 3 ռ., Ս. Մարարտարեան 1 ռ., Ս. Միսնեան 2 ռ., Ա. Սիմեոնեան 2 ռ., Վ.

Վարդանեան 1 ռ., Տ. Մէլթարեան 2 ռ., Բ. Ալեքսանդրեան 2 ռ., Ն. Իգիթեան 1 ռ., Յ. Մէլթարեան 5 ռ., Ա. Յակոբեան 2 ռ., Գ. Զարեան 1 ռ., Տ. Արքայանեան 2 ռ., Վ. Ծիրացեան և Վ. Սաղաթեան 3 ռ., Յ. Տէր-Մովսիսեան 1 ռ., Գ. Ալի-Էֆէնդի 1 ռ., Ս. Արքայանեան 1 ռ., Ս. Բոսայեան 5 ռ., Ս. Ասմարեան 1 ռ., Բ. Բոգդարեան 5 ռ., Մ. Մոսեան 5 ռ., Ոմն 3 ռ., Լադարով 2 ռ., Իվանով 20 կ., Տ. Մայսուրադէ 20 կ., Բուրուզեան 50 կ., Պիլին 15 կ., Մ. Գրիգորեան 50 կ., Մ. Ժամկոչեան 1 ռ., Ա. Մայսուրադէ 2 ռ., Ա. Ալեքսանդրեան 3 ռ., Մ. Հուլարեան 1 ռ., Բէթանով 1 ռ., Գ. Զադարով 50 կ., Վ. Պետրոսեան 1 ռ., Յ. Նոճկանով 1 ռ., Լ. Ֆիլարով 50 կ., Պ. Պալով, 3 ռ., Յ. Յակովբեանց 2 ռ., Մարտեան 5 ռ., Բ. Բայրուրեցեան 1 ռ., Մ. Դաւթեան 1 ռ., Մուրադի 1 ռ., Վոյարով 1 ռ., Դոկտոր 1 ռ., Մ. Արսեղեան 5 ռ., Բ. Անիստեան 1 ռ. 50 կ., Գ. Տրգատեան 3 ռ., Վ. Շառամանեան 1 ռ. 50 կ., Տ. Տրգատեան 1 ռ., Վ. Յարութեան 1 ռ., Մ. Յարմանեան 1 ռ., Տ. Յարմանեան 2 ռ., Յ. Դոյոյեան 50 կ., Գ. Կառավարիչեան 40 կ., Յ. Զիլին 50 կ., Եղբայր Մէլթարեան 50 կ., Վ. Սարգսեան 2 ռ., Դոկտոր 3 ռ., Մ. Բուրուզեան 2 ռ., Ս. Արեւելեան 3 ռ., Կ. Սալաֆեան 1 ռ., Գ. Բոսայեան 5 ռ., Գ. Բոսայեան 2 ռ., Ս. Սարաֆեան 3 ռ., Տ. Դաւթեան 5 ռ., Ս. Բաղդասարեան 1 ռ., Գ. Դորին 10 ռ., Զարեանի համբարից 20 ռ., Զիլինկարեան Աղաբ. Բոլորեան 25 ռ., Ս. Վասիլի Գամեկեով 3 ռ., Ռ. Պոյոյեան 5 ռ., Գ. Մարքեֆեան 1 ռ., Ս. Արդյան 3 ռ., Մ. Արսեան 2 ռ., Գ. Գեորգ քահ. Միսակեան 2 ռ., Կ. Ֆիլիֆով 5 ռ., Ն. Մոզորեան 3 ռ., Յ. Մանուկեան 1 ռ., Բ. Բէթանեան 50 կ., Վ. Զիլինկարեան, Յ. Զիլինկարեան, Թ. Մարկոսեան, Ս. Մայսուրադէ, Վ. Սուգասեան, 1-ական ռ., Ն. Բիւրեճեան 10 ռ., Եւալով Բայրուրեցի 2 ռ., Մրգավաճառների համբարից 20 ռ. 60 կ., Ս. Օլէսկի 10 ռ., հայաթեւոյնների համբարից 4 ռ. 15 կ., Պ. Միլեդարեան 1 ռ., Եղբայր Աւետիսեան 2 ռ., Կառավարների համբարից 25 ռ., Հիւսեյնի համբարից 23 ռ. 55 կոպ. Գիւնիվաճառներից—Ա. Սաղաթեան, 3 ռուբլի, Մ. Մարտեան 3 ռ., Տ. Ելեֆեան 1 ռ., Վ. Նոյալեան 2 ռ., Լ. Մարաթեան 50 կ., Յ. Նոճիկեան 50 կ., Մ. Միլեդեան 2 ռ., Յ. Պուլզուրեան 2 ռ., Յ. Անիստեան 2 ռ., Յ. Յարութեան 50 կ., Մ. Մարտեան 30 կ., Ե. Համպարեան 1 ռ., Մ. Նահապետեան 50 կ., Յ. Սրապեան 3 ռ., Ս. Պոյաճեան 1 ռ., Յ. Պետրոսեան 30 կ., Տ. Բորեան 2 ռ., Ս. Յարութեան 50 կ., Տ. Բոսեան 2 ռ., Ա. Թաթուլեան 1 ռ., Կ. Նաչկավանքեան 30 կ., Գումարն է 756 ռ. 25 կոպէկ։

ՆԵՐՓԻՆ ԼՈՒՐԵՐ

«Մշակի» ներկայ համարը բաղկացած է 1¹/₃ թերթից։

Մեզ խնդրում են տպագրել հետեւեալը. «Թիֆլիսի Հայուհեաց Բարեգործական ընկերութեան վարչութիւնը կամենալով օգնութեան հասնել Զիար գիւղի հրեղին թշուառ փաւսվածներին, խնդրում է յարգելի հասարակութեանն աջակցել իրան այդ գործում—նուիրելով հագուստ, սպիտակեղէն և կոշիկ ամեն մի իր կրնողունով մեծ շնորհակալութեամբ։ Նորում են իրեն ուղղել հետեւեալ հասցեով—Գանձակաւայ փողոց, № 25, կար ու ձեռք արհեստանոց։

Անցեալ օրը մենք հաղորդել էինք, որ Թիֆլիսի գումայի ձայնաւորները նշանակել են մասնաւոր խորհրդակցութիւն, քննելու թէ ինչ բարենորոգումներ են անհրաժեշտ երկրի կուլտուրական ու քաղաքական կենսին առաջ տանելու, զարգացնելու համար։ Մարտի 3-ի այդ ժողովին մասնակցեցին 40-ից աւելի ձայնաւորներ։ Խորհրդակցութեան ժամանակ ընտրութեան գրովից այն հարցը, թէ արդեօք առաջով միանալ Ռուսաստանի ներքին նահանգներին յայտնած պահանջներին, թէ՛ ներկայացնել Կովկասի յատուկ պահանջները կամ այն բոլոր բարենորոգումներ ու ձեռք առնելիք միջոցները, որոնք անհրաժեշտ են երկրի բարօրութեան և պետական կարգի զարգացման համար։ Մեծամասնութիւնն այն կարծիքն յայտնեց, որ առ այժմ պէտք է միանալ ներքին նահանգներին ընդհանուր պահանջներին, որովհետեւ Կովկասի կարգիները տեղական բնաւորներով են ունեն և աւելի յարմար է նրանց մշակութիւնը և քննադատութիւնը թողնել Կովկասի նոր փոխարքայի գալուց յետոյ։ Ժողովը որոշեց ընտրել և ուղարկել մի պատգամաւորութիւն Պետերբուրգ, որը խնդրէ, որ Կովկասի ազգաբնակչութիւնը էլ ընտրվի կամ ընտրվեն պատգամաւորներ՝ մասնակցելու առաջիկայ օրհնադրական աշխատանքներին, որոնք պէտք է մշակվեն ներկայ տարվայ փետրվարի 18-ի Բարձրագոյն ընտն-

րիպետ արամադրութիւններին համաձայն։ Պատգամաւորութեան համար թեկնածուներ նշանակվեցին—քաղաքապետ պ. Վերմիշեանը, ձայնաւոր իշխան Ա. Մ. Արդուլեան-Երկայնաբաղաւոր և իշխան Գ. Մ. Թումանեանը։

Երևանից հեռագրում են «Բաք.» պաշտօնական լրագրին. «Այսօր, մարտի 4-ի առաւօտեան ժամը 10-ի մօտերը, մի հայ, փողոց վազելով մի բակից, բերդանի հրացանը երկու անգամ կրակեց կանգնած թուրք ամբոխի վրա, բայց անփափա։ Մի ուրիշ տեղ մահմեդականներն ի դուր ամբարանակ արձակեցին մի հայ քահանայի վրա։ Մի երրորդ տեղում մի հայ, կառնով անցնելով, կրակ էր անում դէպի օդը։ Վարկենաբար փակվեցին խանութները։ Ժողովուրդն սկսեց խուճը-խուճը դուրս թափվել փողոցները։ Կէս ժամում կարգը վերականգնվեց և առևտրական հիմնարկութիւնները բացվեցին։»—Որքան ճիշդ է այդ հեռագիրը, երաշխաւորել չէ կարելի։

Վազելակազդի հայ և մուսուլման ազգաբնակչութիւնն ուղարկել է 400 ռուբլի Բագուի զինւորական ժամանակաւոր նահանգապետ գեներալ-ադելուտան իշխան Ամիրխանովին, բաժանելու Բագուի աղէտի զոհերին։ Իշխանն այդ գումարն ուղարկել է կաթիսային։

Բագուի քաղաքային գուման մարտի 1-ի նիստում ընդունել է հետեւեալ որոշումը, որ առաջ ենք բերում «Բաք. ԱՅՅ.» լրագրից. «Դուռնան, որի անագին մեծամասնութիւնը մահմեդական և հայ ձայնաւորներ են, մօտից ճանաչելով այդ ազգերի փոխադարձ արարելութիւնները, վճարաբար յայտնում է, որ ոչ կրօնական և ոչ էլ տեղական անտեսական պայմաններն են առաջ բերել այն տխուր ընդհարումը։ Այդ պատճառով բոլոր պատահածները մէջ չէ կարելի մեղադրել ոչ հայերին, ոչ էլ մահմեդականներին, և պէտք է յուսաւ, որ անկողմնակալ դատաստանը կը պարզէ ամբողջ պատահարը։—Դուռնան այդ որոշումն ընդունել է առանց հակաճառութեան։

Ներքին գործերի մինիստրը թոյլտուութիւն է խնդրել որ ինքն ընտրէ իր նախագահութեան տակ եղած յանձնաժողովին մասնակցող անդամները։

Բագուի քաղաքային գումայի վիճակագրական բերօրն տեղեկութիւններ է հաւաքում փետրվարի 6—9 զոհերի թւի մասին։ «Բաք. ԱՅՅ.» քաղում է այդ ցուցակից սպանված մահմեդականների, ռուսների և միւս ազգութեան անհատների անունները։ Այդ թւի մէջ մտել են միայն այն սպանվածները, որոնք թաղված են քաղաքային գերեզմանատանը և որոնք կարելի է եղել համարել. այն ինչ մահմեդականներն իրանց սպանվածներին թաղել են նաև Շիրսովում, Նովոմասնի ճանապարհում, սպանաւորի մօտերը, տարել են մօտակայ գիւղերը։ Այդ ոչ լիակատար ցուցակով սպանված մահմեդականների թիւն է 90 հոգի, իսկ ռուսներին 14 հոգի (3-ը կիւն), վրացիներին—3 և մէկ գերմանացի ու մէկ հրէա։

«Berl. Tageb.» լրագրի Պետերբուրգի թղթակիցն ասում է, որ ներքին գործերի մինիստրի նախագահութեան տակ եղած յանձնաժողովը հազիւ 2 շաբաթ յետոյ հաւաքվելու ժողովրդական ներկայացուցիչներ ընտրելու կանոններին նախագիծ մշակելը կը տե՛ն առնուազը 1 ամիս, մի ամիս էլ կը տե՛ն ընտրութիւնները։ Կը նշանակէ՝ ներկայացուցիչները կարող են ժողովի դալ յունիս ամսից ոչ առաջ։ Բայց որովհետեւ այդ ժամանակ պաշտօնաներից շատերը արձակուրդով հեռանում են պաշտօնատեղից, ժողովը կարող է կայանալ միայն աշնանը։ Ժողովրդի ներկայացուցիչները ընտրութիւնները կարող են արագանալ որ և է արտակարգ պատահարի ազդեցութեան տակ։

Վաղեիկավազդի ազգաբնակչութեան մէջ յամառ լուրեր են պտտում, որ քաղաքի շրջափակի ինքուշ մահմեդականները խուժելու են քաղաք և կոտորելու բնակիչներին։ «Բաք. ԱՅՅ.» լրագրի թղթակիցը գնացել է նահանգապետի պաշտօնակատար գեներալ-մայոր Բեթվուսկու մօտ իմանալու, թէ որքան հիմնաւոր են այդ լուրերը։ Աշխատակիցը ստացել է հետեւեալ պատասխանը. «Պետուր լուրերը ոչ մի հիմք չունեն։ Այդպիսի լուրեր տարածվում են ոչ միայն Վաղեիկավազդում, այլ և Դրօզնիում, Պետադօրսկում, Մօզդօկում և այլն,

որպէս զի սարսափի մէջ պահեն ժողովրդին։ Որովհետեւ լուրերը շատ յամառ կերպով կրկնվում էին, նահանգապետն այցելեց անցեալ օրերը Վաղեիկավազդի շրջը գտնված 8 ինքուշ գիւղերը, որպէս զի նրանց գլխաւորներին իմանայ նրանց կարիքները, նրանց դժգոհութեան պատճառները և միջոցներ ձեռք առնել։»

«Է. Օ.» լրագրերը առաջ է բերել այն գուժարները, որ ծախսվել են 1904 թւին Ռուսաստանում ցէնսուրայի վրա։ Երևում է, որ այդ հիմնարկութիւնը ծախսել է 332,740 ռ., որից 73,886 ռ. միայն մամուլի գործերի վրա խաւոր վարչութեան վրա է ծախսվել։

«Berl. Lok. Anz.» լրագրին հեռագրում են փետրվարի 22-ին. «Ս. Իւ. Վիտտէն այսօր խնդրել ներկայացրեց հրաժարման մասին։ Մինիստրների խորհրդի նախագահ նշանակվել է պետական քարտուղար Սոյսկին, այն ինչ Վիտտէն միայն մինիստրների կօմիտէտի նախագահն էր։ Պահպանողականները շնորհաւորում են Սոյսկու նոր պաշտօնը և ուրախ են։»

«Правд» թերթի № 6-ում տպագրված է 121 հոգու ստորագրութիւն կրող «Մօսկվայի միջնակարգ դպրոցների դասատուների գրութիւնը» վերնագիրը կրող մի յօդուած, որի մէջ ասված է. «Վաղուց յայտնի են ռուսական միջնակարգ դպրոցի պակասութիւնները։ Վանսովկու մինիստրութեան օրով այդ պակասութիւնները խոստովանվեցին Գահի բարձունքից։ Սակայն բնութագրաւոր կարողացաւ գործն այդպէս տանել, որ ներքին պահանջված և վերին հրամանագրված ընթացիկների փոխարէն ռուս միջնակարգ դպրոցը մնաց նախկին անտանելի պայմաններում և նոյն իսկ աւելի ևս զօրացան նրա ամենքին յայտնի պակասութիւնները։ Դասատուներն այժմ առաջվանից աւելի տալիված են սաներին հացի փոխարէն քան իրենց և ոչ մի րօպէ չեն կարող հանգիստ լինել, որ ոչ ոք և ոչինչ չեն գայ խանգարելու իրանց գործը, ընդհատելու իրանց գործունէութիւնը։ Այժմ աւելի քան երբ և է ոստիկանական ըէժիմը խանգարում է միջնակարգ դպրոցի գործերում, և մանկավարժները վրա դրվում են ոստիկանական պարտաւորութիւններ։ Այդ են բնութագրատիպի խոստացած և անկատար թողված դպրոցական ընթացիկների արդիւնները։ Եւ դպրոցը չէ կարող սպասել մօտաւոր ապագայում էլ որ և է լաւ բան. դպրոցական ընթացիկները չեն նախագիծված դեկտեմբերի 12-ի ուղարկում, նա դեռ չէ ճանաչվում իբր ժողովրդական կենսային հասունացած պահանջ։ Այլ ևս այսպէս սպրել չէ կարելի... Մենք միջնակարգ դպրոցի դասատուներն, չենք կարող հաշտվել դպրոցական եղած կարգերի հետ, բնութագրաւորական և ոստիկանական դպրոցական ըէժիմի հետ։ Զրկված դասատուութեան ազատութիւնից, ապահով չը լինելով մեր սեփական իրաւունքների համար, մենք չենք կարող կրթել նոր սերունդներ, որոնք դատապարտված են նոյն իրաւագործի վիճակին, ենթարկված են նոյն ըէժիմին։ Վերջում համոզում են յայտնում, որ «միջնակարգ դպրոցի բաղդը անբաժան կերպով կապված է քաղաքական անխուսափելի ընթացիկների հետ։ Ռուսական լուսաւորութիւնը փրկելու համար անպայման անհրաժեշտ է հրաւիրել մասնակցելու օրհնադրական իշխանութեան և վարչութեան գործունէութեան վերաբնութեան մէջ ամբողջ ժողովրդին ներկայացուցիչներին, առանց կարողութեան, ազգութեան, կրօնի և սեռի խտրութեան։»

ԻԳԻԻԻԻԻԻ մեզ գրում են. «Ամսիս 20-ին Իգիթի ս. Սահակ եկեղեցու գաւթում խուռն քաղութեան ներկայութեամբ պատարագից յետոյ հոգեհանգիստ կատարվեց Բագուի գոհների և Դավիթ Լալայեանի յիշատակին. ընկեր երիտասարդներից մի գեղեցիկ պսակ կար դրված. տխուր հանդէսը բացեց Մ. քահ. Չ. իսկ դամբանական ճառեր կարդացին Տ. Ս. Չ. և պ. Ե. Նորոյ։ Այսօր հանդիսաւոր հոգեհանգիստ կատարվեց գաւառապետի և օգնականի ներկայութեամբ Իգիթեանայի (Իգիթի մէկ թաղ) պարսից մզկիթում և հայոց եկեղեցում։ Միւրոյ և համերաշխութեան մասին խօսեցին արժանապատիւ Կիւրեղ վարդապետը և պ. Ս. Կանայեանց. թարգման էր Յ. Հայրապետեան։ Թէ՛ գաւառապետը և թէ՛ ժողովուրդը (շրջակայ գիւղերից և շատ կային) շատ գոհ սրտով հեռացան։ Կիւրեղ հայր սուր-

բը այստեղից մեկնեց Կողբ, նոյն ատրով քա-
րոզիլուս:

ՍՍՍԱՐՊՈԼԻՑ մեզ գրում են. «Վարդա-
նանց տօնի օրը հայ վաճառականները փակել
էին խանութները, որ ներկայ լինեն պատա-
րագին և հոգեհանգստին: Պատարագից յետոյ
քահանայները զգեստաւորված և շարական եր-
գելով՝ դիմեցին հայոց ուսումնարանի դահլի-
ճը, ուր երկու սեռի բազմութեան ներկայու-
թեամբ հոգեհանգստ կատարվեց: Ապա տիկ.
Ս. Թադևոսեան ձառ. կարգաց տօնի առթիւով,
ուղղելով իր խօսքերը, գլխաւորապէս, հայ
մայրերին, որից յետոյ դարձեալ սովորող եր-
կու սեռի մասնակիցները երգեցին ու կարգացին
մի քանի կտորներ: Նոյն օրը, երեկոյան,
առևտրական ակումբի դահլիճում կայացաւ մի
երեկոյթ, որի ժամանակ վաճառվեցին հայ
տիկիները և օրիորդները պատրաստած ձե-
ռագործները. արդիւնը գոյացաւ մօտ 700 ռուբ-
լի, որի մի մասը մտադիր են յատկացնել
Բագուի անմեղ զոհերի օգտին»:

ՊԵՏԱՏԻՅՈՐՍԿԻՑ մեզ գրում են. «Երէկ,
24-ին, Վարդանանց տօնի օրը ամբողջ հայ
վաճառականները և արհեստաւորները փակել
էին իրանց խանութները և շտապել եկեղեցի:
Տաճարը լի էր արթողներով: Հայր Շխիսեան
քարոզ խօսեց Բագուի աղէտալի վերջին դէպ-
քերի մասին, շնորհով այն իրողութեան վրա,
որ հայ և թուրք ժողովրդի մէջ չը կայ և չը
կար՝ ազգային ատելութիւն և այդ վերջին
ստակալի դէպքերը արհեստական կերպով է
առաջ բերված չար մարդկանց ձեռքով: Ի
վերջոյ յորդորեց հայ ժողովրդին համերաշխ
ապրել թուրք հարեան ազգերի հետ և միշտ
նկատի ունենալ, որ հարեան ազգերի շահերը
մեր հարազատ շահերն են: Ապա հրաւիրեց
ժողովրդին պատարագից յետոյ ուսումնարանի
դահլիճ, որտեղ Վարդանանց տօնի հանդէս
պիտի կատարվէ: Պատարագից յետոյ երգե-
ցիկ խմբի առաջնորդութեամբ, ժողովուրդը
դիմեց դէպի ուսումնարանի դահլիճը: Տէր
հայրը պահպանելով հանգեալ բաց արեց և ա-
պա բարձրացաւ ամբիւն և խօսեց Վարդա-
նանց տօնի առթիւով: Այնուհետեւ երգեցիկ
խումբը երգեց մի քանի ազգային երգեր:
Փոքրիկ աշակերտուհիներ շատ գեղեցիկ կեր-
պով արտասանեցին մի քանի ոտանաւորներ:
Աւուսցիչ պ. Ամատունին խօսեց հայերի
պատմական անցեալի և ներկայի մասին և
անկախ գցեց բազմազան թանկան ասպարէ-
զում հայերի կատարած կուլտուրական դերի
վրա: Հանդէսը վերջացաւ ժամի 2-ին և կա-
մաց-կամաց հասարակութիւնը ցրվեց մտախոհ
տրամադրութեան տակ:

ԳԵՈԿԻՍԵՐՑ մեզ գրում են. «Գեօկիայ ա-
ւանի հայ գաղութը, որ բաղկացած է 105
հայ լուսաւորչական տներէց, բայց չունի դեռ
և ոչ արդթատուն և ոչ եկեղեցի, նոյնպէս
հոգեհանգստ կատարեց Բագուի կոտորածի
դժբաղդ զոհերի յիշատակին: Փետրվարի 26-ին
խուռն բազմութեան ներկայութեամբ, որի մէջ
կային հայեր, ուսանող, վրացիներ և թուրքեր,
հոգեհանգստ կատարեցին տեղական ինչ-
պէս ուսուցիչ, նոյնպէս և գիւղերէց հրա-
ւիրված երկու հայ քահանայները և երկու
թուրք զաւրները: Հոգեհանգստը սկսվեց
ուսուցչի խօսքով և աղանդիկ ճա-
նաչողութեամբ, հայերը խնդրել էին մեր թմբի
առաջնորդ Անանիայ Կարապետից ուղարկել
Բագուում եղած երկու վարդապետներէց մէկին,
բայց սրբազանը մերժեց էր: Ահա տասն և
մէկ տարեկան են, ինչ ես այստեղ եմ և տես-
նում եմ, որ Շամախու առաջնորդները ամեն
ջրօրհնէքին գնում են Շամախուց Բագու,
բայց չեն տեսել երբեք, որ առաջնորդներէց
մէկը այնքան լինի Գեօկիայը և գաւառիս
բազմութիւն հայ գիւղերը, որտեղ կան փակ-
ված, բարուքանդ եղած եկեղեցիներ: Բողա-
ւանդ գիւղի քահանայ Տէր Պողոսը 1882 թը-
ւականին խօսքից վախճանվել է և այդ
ժամանակից սյգ գիւղի եկեղեցու դռները չեն
բացվել, գիւղը մշտական քահանայ չունի: Եւ
այսպէ՛ս շատ գիւղեր—մի տեղ քահանայ չը
կայ, մի ուրիշ տեղ եղածը անգամաւր ըն-
կած է, մի այլ տեղի քահանայ այնքան ծեր
է, որ այլ ևս պաշտօն կատարել անկարող է:
Բայց դուք, հոգեհոգ հայեր, շարունակեցէք

մեր սիրած գործը հարուստ Բագուում, իսկ
քարոզի և քարոյական խրատները կարօտ
գիւղացիները թող մնան մասնավոր իրանց
ախտերին — արեւելոցութեան, գործութեան,
թղթախաղութեան, խափ դէպի կրակելուն և
այգիներ կոտորելուն»:

ՍՈՒՐԱՄԻՑ մեզ գրում են. «Փետրվարի
24-ին հինգշաբթի Վարդանանց տօնի օրը
Սուրամի Գրեգոր Լուսաւորչի եկեղեցում
հոգեհանգստ կատարվեց Բագուում կոտոր-
վածների համար: Այդ օրը բոլոր խանութ-
ները փակ էին: Ժամը 10-ին սկսվեց պատա-
րագ, հաւաքվեցին աւելի քան 1000 հոգի թէ
հայերից, թէ վրացիներից և թէ հրէաներից,
դա չը տեսնված քան էր Սուրամի համար:
Հոգեհանգստից առաջ տեղիս գործակալ քա-
հանայ Առնոսեանը քարոզ խօսեց թէ օրվայ
տօնի և թէ հոգեհանգստի առթիւ, հրաւիրե-
լով ժողովրդին ապրել սիրով և համերաշխ,
որոնք մեծ տպաւորութիւն թողեց ներկայ
կողմերի վրա: Ներկայ էր հոգեհանգստին
տեղիս վրաց քահանայ: Հոգեհանգստից յետոյ
ժողովուրդը հոգեհանգստի դասի հետ ի միասին
դիմեց տեղիս հրէից աղթատունը, որտեղ
կատարվեց հոգեհանգստ և այդ առթիւով
ձառեր արտասանվեցան երկու կողմիցն էլ»:

ՔԻՇԻՆԵՆԻՑ մեզ գրում են. «Այսօր՝ փե-
տրվարի 20-ին, տեղիս սուրբ Աստու-
ծամօր եկեղեցում հոգեհանգստ կատար-
վեց տեղական հայ ինտելիգենտ, հասարակ
ժողովրդի և կովկասեցի զինուորների խուռն
բազմութեան ներկայութեամբ՝ ունեւոր ու աղ-
ջատ, տղամարդիկ ու կանայք զգացված
սրտով՝ եկել խմբվել էին միասին արտաս-
վելու այն սարսափելի աղէտի մասին, որ
նենգամտութեամբ կատարվեց օրը ցերեկով՝
Բագու քաղաքում...»

ՎԱՐԴԱՆԻՑ գիւղից մեզ գրում են. «Փե-
տրվարի 22-ին, ս. Ղեւոնդեանց տօնին, Վար-
դաւորը գիւղի ս. Աստուածածին եկեղեցում
կատարվեց հոգեհանգստ Բագուում նահատակ-
վածների համար: Հոգեհանգստին ներկայ էին
ամբողջ հասարակութիւնը և գիւղական ու
ուսումնարանի աշակերտներն ու աշակերտու-
հիները: Ս. պատարագից յետոյ ծխատէր քա-
հանայ Եղիա Ձորաբեանը զգացուցիչ ճառով
յայտնեց իր խորին ցաւակցութիւնը այդ XX-րդ
դարի լուսաւորութիւնը նսեմացող ու խաղա-
քաղաքացիների անմեղ հայ ուրիշը թափելու
մասին՝ և հանգստացրեց զգացված ժողովրդի
վրդովված սրտերը, առաջ բերելով և շնորհ-
ով, որ նոյն իսկ ամենամոռեանդ թուրքերը,
զգալով իրանց «շէյթանից» խաբված լինելը՝
սրտանց զղում են: Քարոզիչ հայրը՝ զրուս-
տելով Թիֆլիսի յարգելի քաղաքագլուխ պ.
Վերմիշեանի ջերմ միջամտութեամբ այդ եղ-
բայրապաշտութեանը վերջ տալու գործում՝
իբրև արձագանք զգացված ժողովրդի բուռն
ցանկութեան, երկար օրեր մաղթեց անշահա-
ւէր գործողին: Նոյն օրը հանգստակից 30 ռ.
Բագուի կարօտեալների համար: Այլիս առաջ ու-
նենալով Բագուի սիրտ ճնշող և եղբայրապաշտ
կոտորածի դժբախտ հետեւներէն և առաջնա-
ղերով օգուտ հայ որբերի և դժբախտների
իմ և ինձ յանձնված ուսումնարանի աշակերտ-
ները չըաւոր լուծանք 2 ռ. 50 կ. զգացված
մարդասիրական ամենատուրը զգացումով, կը
ցանկայինք, որ «Հրաշլի (XX) դարի»
լուսաւորութիւնը անաչառ հետեւողութեամբ
պարզեց արդարութիւնը և արժանաւոր կերպով
պատժելով մեղաւորները՝ վերացնէ այդպիսով
իր վրայից այդ՝ իր բարձրութիւնը և «հրա-
շալիութիւնը» նսեմացնող զոհելի գործը»:

ԿՈՂԻՑԻՑ մեզ գրում են. «Բագուի ստակալի
աղէտին յաջորդեց Երեւանի արհեստհիշ ընդ-
հարումը, որ տեղի ունեցաւ փետրվար ամսի
20-ին և 21-ին երկու դրացի ազգերի, հայերի
և թուրքերի մէջ: Վերջին դէպքը աւելի սար-
սափեցրեց տեղիս թէ հայ և թէ վրացի թուրք
ազգաբնակութեան: Բագուում կատարված կա-
տարի զգաւորութիւնները օրինակ պէտք է
զգոնային Երեւանի և նրան շրջապատող գա-
ւառներին: Սակայն լուրերը պարզեցին, որ
եռանդուն միջոցներ են ձեռք առնված խաղա-
ղութիւնը վերականգնելու երկու ազգերի մէջ:
Փետրվարի 25-ին եկաւ մեր գիւղը բարձրա-
դասի Կիւրեղ Վ. Կիւրեղեանը: Հետեւալ օրը
գիւղիս ս. Երեմիայի եկեղեցում մատուց-
վեց պատարագ. եկեղեցին ծայր է ծայր լին-
էր: Այդտեղ էին տեղիս պրիստաւը մահմեդա-
կան ժողովրդի մի ստուար խումբ՝ իրանց
զրուխ ունենալով մի քանի բնգեր և խաներ:
Պատարագից յետոյ հայր Կիւրեղեանը խօսեց

փոխադարձ խաղաղութեան և համերաշխութեան
մասին ընաթան վերջնիւով Աւետարանից
«Երանի խաղաղարարաց, դի նոքա որդիք Աս-
տուծոյ կոչեցին»:

Քարոզը հայերէնից թուր-
քերէն թարգմանում էր Իզդիբիցի պ. Յակովբ
Պետրոսեանց. թարգմանութիւնը լինում էր
թոյլ, բայց և այնպէս քարոզը լաւ տպաւորու-
թիւն թողեց մուսուլման եղբայրների վրա:
Նրանք խորին շնորհակալութիւն յայտնելով
հայր Կիւրեղեանին՝ խոստացան իրանց գիւ-
ղերում ևս տարածել համերաշխութեան գա-
ղափարը: Հոգեհանգստ չը կատարվեց, որով-
հետեւ փետրվարի 24-ին Վարդանանց և Ղե-
ւոնդեանց տօնի օրը տեղիս երկուստեքու-
թեան նախաձեռնութեամբ կատարվել էր հո-
գեհանգստ Բագուում ընկած անմեղ զոհերի
յիշատակին: Պատարագից յետոյ հայերը և
թուրքերը երգիչին ապրել խաղաղ ու հա-
մերաշխ: Յորդ ունեւր, որ փոխադարձ երաշխա-
ւորութեամբ կը շարունակենք մեր յարաբե-
րութիւնը մեր դրացի մուսուլման եղբայրներ
հետ»:

ԲԵՆԴՈՒՍ գիւղից (Յարսի շրջան) մեզ գր-
ում են. «Այսօր, փետրվարի 19-ին, «Մշակը»
հասաւ գիւղի իր հետ բերելով Բագուի արհես-
տի դէպքերի լուրը: Կիրակի, փետրվարի 20-ին,
մեր գիւղի ս. Յովհաննէս եկեղեցում, խուռն
աղթողների ներկայութեամբ, Բագուի աղէտի
զոհերի համար ս. պատարագից յետոյ հոգե-
հանգստ կատարվեց: Այդ օրը Արսէն քահա-
նայ Բլրցեանը, մի ազգու քարոզով յորդոր
կարգաց ժողովրդին, որ հարեան թուրքերի
հետ համերաշխ և խաղաղ լինեն: Իրաւացի-
ներին հրաւէր կարգաւոր, որ շատ տեղիս ար-
դէն Բագուի աղէտին զոհ գնացած ընտանիք-
ների համար, ժողովարարութիւն է բացվել,
մենք ևս պարտական ենք մեր լուծան հասցնել
աղէտի վայրը: Այս կողմերում ևս սկսվում է
շուտով օգնութեան գործը, այրեացած որբա-
ցած քոյրերի և եղբայրների համար»:

ՎԱՋԻՍՆ գիւղից Մեզ գրում են. «Վաչիսնը՝
մօտ 150 տնից բաղկացած մի գիւղ, գտնւել է
Ջրէց: Նա ունի մի փոքրիկ առուակ, որից
կախում ունի հազարաւոր ժողովրդի կեանքը
ու անտեսական բարեբաղուն: Պէտք է աչքով
տեսնել, թէ ինչ մեծ գոտաւորութիւն է քա-
ղում գիւղացիներ թէ մամա և թէ ձմեռ ժամա-
նակ: Շատ ժամանակ ջուրն իսպառ կտրվում
է, չորանում, և կանայք կուժը ուսերին հեռա-
նում են գիւղից մինչև 1 1/2 վերստ, տանջանքով
ջուր բերում. իսկ ձմեռը աւելի դժոխային է:
Առուն սառչում, չորանում է. այդ գեղջիկուհի-
ները կուժը շաւկներին ստիպվում են 2
վերստ հեռուից ջուր բերել իրանց խմելու հա-
մար, կամ ընդհանրապէս գիւղին կից լճի
առույցները շաւկով կրում հալեցնում և ի-
ւամիցնում են ընտանի կենդանիներին և ի-
րանք բանեցնում: Բայց այդ ստացաւերը
ամառվայ հոտած ջրերն են, որոնք խիստ
ճիւղաւար ցարեւ են առաջացնում թէ մարդ
կանց և թէ անասունների մէջ: Այժմ, այդպի-
սի ցարեւ շատ կան այս գիւղում. համարեա
թէ ամբողջ հասարակութիւնը հիւանդ է: Սրա-
նից մի 7—8 տարի առաջ այդ հոտած ջուրը
ընտելութեան է եւ թարկված և համարեա բոլո-
րին արգելվածայր ջրի գործածութիւնը, որով-
հետեւ նա իր մէջ ունի բացի հոտից և խօլիւ-
րի թոյն: Այդ հիւանդութիւնների պատճառով
գիւղի մէջ պտտում է լուր այդ ջրից ազատ-
վելու մասին: Վաչիսն գիւղից դէպի հիւսիս
արեւելք գտնվում են հրաշալի աղբիւրներ, որ-
տեղից շատ հեշտութեամբ կարելի է ջուր բե-
րել: Դրա համար հարկաւոր է ամինաշատը
300—400 ռուբլի: Տեղիս քահ. Տէր-Կարապետ
Իշխանեանց և գիւղի առաջաւորները աշխա-
տում են այդ գործը առաջ տանել: Տայ Աս-
տուծո, որ շուտով աշողլի:

ՍՂՆՍԻՑ մեզ գրում են. «Փետրվարի 27-ին,
կիրակի օրը, Սղնախի հայոց ս. Կարապետ
մայր եկեղեցում, ժողովրդի ցանկութեան հա-
մաձայն՝ հոգեհանգստ կատարվեց Բագուում
փետրվարի 6—9 զոհ գնացածների համար,
ուր ներկայ էին շատ հայերի հետ միասին և
շատ ինտելիգենտ վրացիներ՝ իրանց միաբան
քահանայներով: Հոգեհանգստից առաջ Արշակ
քահանայ Տէր-Ստեփանեանը վրացերէն լե-
զուով մի զգացված քարոզ խօսելով՝ շատերին
ստիպեց արտասովել: Իր քարոզի միջոցով կար-
գաց և «Մշակ» լրագրի № 31-ում գետնդրված
«Ինչպիսի միջոցներով» յօդուածի վրացերէն
թարգմանութեան կարեւոր կէտերը: Նա խօսե-
լով երկու հարեան ազգերի—հայերի և վրա-
ցիների մէջ սիրոյ հաստատվելու մասին՝ շնոր-

հակալութիւն յայտնեց «Մշակ» և «Տնօրիս-
Փոքրէջէլ» լրագրիւններին իրանց ընտրած գե-
ղեցիկ ուղղութեան համար, որ քարոզում են
իւրաքանչեւի մէջ փոխադարձ սէր և միաբա-
նութիւն: Տէր-Կարապետ ակնարկեց որ, ազգերի մէջ
սիրոյ տարածման մեծ գործի ղեկավարները
պէտք է համարել ուսուցիչներին, հոգեհոգա-
կաններին և լրագրութիւնը և օրինակ բերե-
ծողներ երկու վերայիշեալ լրագրիւնները, որոնց
շնորհիւ և արծարծվել է ներկայ միութիւնը,
հրաւիրեց բոլոր ուսուցիչներին և հոգեհոգա-
կաններին—նոյն ոգւով գործել: Մեղանկց յե-
տոյ հոգեհանգստեան կարգ կատարեց մեր ե-
կեղեցում և վրաց հոգեհոգականութիւնը, որ
գեղեցիկ տպաւորութիւն թողեց մեզ վրա:
Հոգեհանգստից առաջ խօսեցին սիրոյ և միա-
բանութեան մասին աւագ քահանայ Սիմէոն
Բէգիւիւր, Միխայիլ Ալեքսանդրով, Նասիճէն
և Իւան Գիգօյով Մանշափէճէն: Ժողովուրդը
սքանչացած սիրոյ այսպիսի արտայայտու-
թիւններից՝ ուրախ տրամադրութեան տակ
ցրվեց եկեղեցուց»:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

4 մարտի

107-րդ: «Daily Telegraph» լրագրում հրա-
տարակված է. «Մուկղէն: Հիւանդանոցները
լցված են վիրաւորներով: Եւրոպացիները ա-
հագին կորուստներ կրեցին երկաթուղիական
պահեստի մօտ: Նրանք կորցրին 7,700 մարդ:
Անկարելի է ճիշդ գաղափար կազմել ընդհա-
նուր կորուստների մասին: Ասում են, որ
ոռուական ձախ բանակը շրջապատված է, ու-
րովհետեւ, չը նայելով նրա ջանքերին՝ նրան
չաջողվեց միանալ գլխաւոր ոյժերին: Շրջա-
պտոյտ շարժումով Մուկղէնի և Ֆուշուհի
միջև եւրոպացիները կտրեցին ոռուական
200,000 մարդուց բաղկացած ոյժերը մնացած
բանակից, որը տեղեկութիւն չունէր գործերի
դրութեան մասին: Աւելի ուշ իմանալով Մուկ-
ղէնից յետ նահանջելու մասին, այդ զօրա-
սիւնը ստիպված էր գնալ լեռներով սաստ-
կացած մարշով և վերջապէս միացաւ գլխա-
ւոր ոյժերի հետ, կատարելով հիանալի ըն-
թացք երեք օրվայ ընթացքում: Հնարաւոր է,
որ յետ նահանջում կը դադարեցվի այն պատ-
ճառով, որ ոռուները շատ մեծ օժանդակ զօրք
ստացան: Պատերազմից եկած օֆիցերի խօս-
քով, եւրոպական ձախ բանակը չը լսված արա-
գութեամբ էր մօտենում Մուկղէնին, մի օրում
նա անցաւ 30 մղոն, երկրորդ օրը 35 մղոն, երրորդ
օրը 20 մղոն, իսկ չորրորդ օրը հասաւ քա-
ղաքի ծայրերին: Մի քանի օրաբաժնի ու-
ղարկված էր Կուրօպատիկներին իր գլխա-
ւոր շտաբով գտնելու համար, բայց նը-
ւոր շտաբով գտնելու համար, բայց նը-
րանք արդէն անհետացել էին: Իմանալով
այդ բանը, Նօդին բացականչեց. «Վիշապը
ձեռքից փախաւ»: «Փետրվարի 23-ին Նօդին
կենտրոնացրեց իր բանակը և սկսեց արշաւել
դէպի Տեկիս այն կէտից, որ գտնվում է դէպի
հիւսիս արեւելք Մուկղէնից, երբ յանկարծ
հանդիպեց ոռուական 40,000 մարդուց բաղկա-
ցած պահեստազօրքին, որը կատարութեամբ
յարձակում գործեց նրա վրա: Սկսվեց կա-
տարի կռիւ, որը յետոյ ձեռնամարտի փուլ-
վեց, նման հին ժամանակների կռիւնե-
րին: Եւրոպացիները բազմեց, ամենակրիտի-
քական վայրկեանում օգնութեան հասան եւ-
րոպական ալ թիկն բաժանված զօրքերը և
կտրեցին ոռուական հաղորդակցութեան գիծը:
Ռուսական ամբողջ կորպուսը շրջապատված
էր: Դաշտը ներկայացնում էր զրուելի սպան-
դանոցի սարսափելի տեսարան:

ԲԵՐԼԻՆ: Հարաւարեման Աթրիկայում
տեղի ունեցան կատարի կռիւներ: Երկու գեր-
մանական զօրասիւն Նաբուգա լեռնանցքում
յարձակում գործեցին ապստամբ տեղացիների
վրա, որոնք յետ մղվեցին մեծ կորուստներով:
Գերմանացիք կորցրին երկու օֆիցեր և ութ
զինուոր սպանված և 4 օֆիցեր ու 30 զինուոր
վիրաւորված:

ՎԻԵՆՆԱ: Կայսրը երկարատեւ խորհրդակ-
ցութեան ունեցաւ Տիսասի հետ: Կայսրը կի-
րակի կուղեւորվի Բուդապէշտ՝ ճգնաժամը լու-
ծելու նպատակով շուտափոյթ միջոցներ ձեռք
առնելու համար:—1906 թւին մտադրութիւն
կայ Վիեննայում կազմել միջազգային գիւղա-
տնտեսական ցուցահանդէս:

ՀՈՒՄ, 4 մարտի: Թագաւորը նշանակեց
Տիտոսնիին խորհրդի նախագահ և ներքին
գործերի մինիստր, արտաքին գործերի մինիստ-
րութեան պօրտֆէլը պահպանելով հանդերձ:

ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Առօրինակում ընկերության բաժնեմաս
Երկուշաբթի, մարտի 7-ին

Հայոց դրամատիկական ընկերության խումբը
մասնակցություն տրվել է Սիմֆոնիայի և պ. Պետրոսյանի կողմից ներկայացվող

Դ ա ռ ա ճ ա ն ը թ ի ռ ն

պատմական դրամա 5 գործ. հեղ. Սուրբաթյանի
Թարգմ. Զալալ Տեր-Գրիգորյանի:

Մասնակցում է ամբողջ խումբը:

Սկզբնական 8-ին երեկոյան:

Տեղերի գները սովորական են:

Հիշարժի, մարտի 10-ին կը ներկայացվի
ի նպատակով Մայրության Բժշկական

Հերթապահ անդամ վարչության
Ու. Յուրյանի և
(2. 4.) Բեքլևան

Բ Շ Կ Ա Պ Ե Տ

Ս. Յ. ՔԱՐԱՆՆԱՆ

Մերից և ջոյից ճիշդագույն ընկերության
լուսավորումը ամեն օր առաջատար 9—12 ժամը և
երեկոյան 5—7 ժամը: ВЕДЯЩИЙСЯ УЛ.
ДОМЪ Сафарова № 13 рядомъ съ III ГИМ-
НАЗІЕЙ. 9—20

ԱՏԱՄՆԱԲՈՑԺ

Ս. Ա. Ստեփանյան

Հնդկական և առաջատար 9—2 և 5—7, Վե-
րամիսական փ. № 8.

Բժիշկ Ա. Միքայելյան

Հնդկական և մասնաբաժնի սիֆիլիս, մոր-
թու և վնասվածքներ և անհոգի հիվանդանոց
ամենալավ օր, առաջատար. 12—2. Երեկոյան 6—8
Մեծ Վանքի փողոց, տուն Կուզմանյանի, դեղա-
տան կից: (տ. օ.) 30—80

Լ յ յ ա թ ա լ

Ս Ի Ր ՈՒ Ե Ր Գ Ի Զ

Նահապետ ԲՈՒՇԱԿԻ Երգերը

Մեակից Գեորգ Ասատուր. մեծ հայ բանաստեղծի
120 ռանգումը

Գրքին է 40 կոպեկ:

Գրքարանում ամեն օր կարող են գրքեր
Գրաֆեյա, № 9, Գ. Ե. Աստապուրյան.
(4.) 1—4

Ֆրանսիական Շոգենառային Ընկերություն

«ՄԵՍԱՅԵՐԻ ՄԱՐԻՏԻՄ» — «MESSAGERIES MARITIMES».

14/27 մարտի մեկնելու է Բաթունից, երեկոյան ժամը 5-ին, «GadGiana» շոգենառային,
հանդիպելով Տրապիզոն, Սամսոն, Կ. Պոլիս, Կոնստանդնուպոլիս, Սադես, Մարսեյլ, Հավր
և Լոնդոն:

Ուղղակի հաղորդակցություն տրամադրվում է մինչև Պարիզ, Նոյնպոլս և մինչև Շանգհայ
(Չինաստանում), կարելի է ստանալ Թիֆլիսում պակասագրքով գներով:

Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկությունները համար դիմել
ընկերության Թիֆլիսի գործակալ պ. Վ. Յակոբյանին, նախկին Արշակունյաց գաղթական,
թիւ 127 գրասենյակը, հեռախոս թիւ 608: Գրասենյակը բաց է 9—1 ժամը ցերեկվայ և
5—7-ը երեկոյան, բացի կիրակի օրերից: 1—1



Պրովիդոր Ա. ՍԱՐՈՒԽՆԵՆՆՅԱՆ

Բ Օ Ր Օ - Ն Ա Ֆ Թ Ա Լ Ա Ն

Ն ո Ր Ն Ի Լ Թ Ը

Կատարելապես ոչնչացնում է գլխի թեփը, ամրացնում է մա-
զերը և օգնում մազերի բնական, տալիս է մազերին իրանց բնական
ու հաստատ տեսքը: Թողարտված է բժշկական վարչությունից,
իբրև ոչ մի ֆրանսիական նիւթ չը պարունակող:

Պահանջարկն Կապասկո Կավազկո Կավազկո Կավազկո
Въ Тифлисе, Баку, Батумѣ, վաճառվում է և Ռուսաստանի դեղա-
տաններում և դեղավաճառատներում:

Արժեքն է 1 ռուբլի 25 կոպեկ:

(2. 1 ան.) 36—50

Հ յ յ ա թ ա լ
«ՀԱՊԱՐՏ ՀՈԳՈՒ ԵՐԳԵՐԻՑ»
ԲԱՆԱՍՏԵՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Հ. Հ ա մ Բ ա Ր ձ ու մ Ե ա Ն

Հրատ. Յ. Արամյանի

Գրքին 30 կոպ.

Լոյս տեսաւ վրաց գրականության թիւ 9.
Է. ՆԻՆՕՇՎԻԼԻ

ԳՕԳԻԱ ՈՒԻՇՎԻԼԻ

(պատմական գրականության կուսակցություն)

Գրքին է 8 կոպ.

Գրքարանում գնողներին 25% զեղծ, ճանապար-
հաճախը գնողներին վրա: Դիմել Թիֆլիս,
Հաղարկա Գրիգորյանցի «Կովկասյան» գրա-
վաճառանոցը: 3—4

Վ ա ճ ա լ ու մ Ե Ն

Բ Շ Ա. ԲՈՒԴՈՒԳՆԱՆԻ

Երկու մեծ առաջատարներ

Ս Ի Ր Ե Ն Խ ՈՒՆԻ (մի պատկերով) 20 կ.

ԱՆԱՐԱՅՈՒԹԻՒՆ և ՊՈՒՆԿՈՒԹԻՒՆ 20 »

Դիմել Թիֆլիսում «Գուտտենբերգ» և «Կեն-
սարանական» գրավաճառանոցները,
իսկ Բազում «СОТРУДНИКЪ» գրա-
վաճառանոցը: 20—25

Թ. ԻՍՊԻՐԵՆԻ

Առաջագործություն (ստեղծագործություն) արհեստանո-
ցը Երևանից տեղափոխվել է Թիֆլիս, Մեր-
յան փող. № 156. Ընդունում է ամեն տե-
սակ կահավարաններ, պողիկոպի, պատմա-
նորի և փայտի վրա քանդակագործություն
պատրաստում: Օգնական կատարելագործ-
ված արհեստանոց խնդրում է Թիֆլիսի և Եկ-
տը յարգելի անձանց չը թողնել անուշադիր:
Պատրաստել կայ 2 հարուստ գրասենյակ:
(2. Ե. Կ.) 5—10

Լոյս տեսաւ մամուլի տակից

**ԱԿՆԱՐԿՆԵՐ ՈՒԴԻԱՑԻ և ՄԱՀ-
ՄԵԴԱԿԱՆ ՀԱՅՏԵՐԻ ՄԱՍԻՆ**

Գրքին է 40 կոպ.

ճանապարհաճախով 50 կոպ.

Դիմել Թիֆլիսում «Գուտտենբերգ» գրավա-
ճառանոցին, Ս. Ռ. Գովաթյանին, Ս. Կ. Կա-
ֆիլիին, Յ. Մեր-Յանյանին (Բեհրու-
թյան փողոց), իսկ Սիմֆերոպոլում (Զրիմ)
հեղինակին այսպես.—Симферополь, священ.
Г. Овсепьянъ. Ե. Կ. 7—15

Տպագրվում է և մայիսի վերջերին լոյս կը տեսնի

Լ Ե Օ

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԵՐՐՈՐԴ ՀԱՏՈՐ (1878—1892), պատկերազարդ, մասնաբաժնի 600 էրես: Մինչև տը-
պագրության վերջնական շարունակվում է ԲԱՅԻՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ: Նեխ հասարակական
3 ռուբլի, ճանապարհաճախով 4 ռուբլի. կազմած 4 ր., ճանապարհաճախով 5 ր. 20 կ.:
Տպագրությունից յետոյ գրքը կը լինի (անկազմ) 4 ր. 50 կոպ. առանց ճանապարհա-
ճախի:

Թիֆլիսի Մ. Բաժանորդագրություն ընդունվում է միմյան «Գուտտենբերգ» գրավա-
ճառանոցում: Դրսից դիմում ենъ Тифлисе, книжный магазинъ «Гуттенбергъ».

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ «ՄՈՒՐՁ» ԱՄՍԱԳՐԻ № 2—3-րդ.—ԲՈՎԱՆԻԱՅՈՒԹԻՒՆ

1. Մորուքի սանտրը, Առանձարի, 2. դեպի Անի, Ա. Առանձարի, 3. Երեկոյան, ոտան.
Ա. Բաժանարի, 4. Թմկաբերդի առու, պոչմա. Յով. Թումանյանի, 5. Բեռնիկա. (պատկ.
գրվելից) Վ. Փափազյանի, 6. Նման գայլերի, ոտան. Ա. Բաժանարի, 7. Դարապետազ կամ
Վալոյ ձոր, Մ. Տ. Ա. Ի. 8. Ռ. Պատկանյանի նամակները, 9. Կենքի ձայնը, ոտան. Ա. Ի.
Մատուրանի, 10. Հայ հաստաճանր, Տ. Ի. 11. Թիւրք. ֆինանսները, Ռուբին Բերբերյանի,
12. Նուէր օր. Ն. Ն. Ա. Ի. Բաժանարի, 13. Օրերվերը վեպ, Բ. Բաժանարի, 14. Կանանց
բար. ընկ. առաջատար, Ե. Ֆրանգյանի, 15. Կովկասի թուրք մամուլը, Տիգրանի, 16. Բնա-
դատություն և մասնաբաժնի.—1) Մուշկ վարդապետի «Դրուգները».—Տ. 2. 2) Ա.
Դերվիշ «Письма Гражданской скорби».—Նա: 3) Բուսրոմ, Ռուբինի դրամաները. Ե.—
Ղազ. Բաժ. Յովսեփյան «Ուտարի և մանկական հայերի մասին». Նա: 17. Նոր ստեղծում
գրքեր:

18. Ներքին տեսություն.—Ներքին կենքի հիմնադրու առաջատարությունները.—Բազուի
արևմտահայ անցքերը.—Հասարակության և էջմիածնի ցոյց տուած նախաձեռնությունները և
ինքնօգնությունները.—Կովկասյան աղբերի համարաշխարհական գաղափարի յաղթանակը.—Շահի
հեռագրերը.—Պաշտօնական հաղորդագրություն Թիֆլիսի, Բաթումի, Երևանի և Կովկասի այլ
տեղերի զանազան խառնակությունների մասին.—Թիֆլիսի երդ. հաւատ. կազմած յանձնա-
ժողովը.—Հայերի պատգամաւորությունը Պատերազմում.—ԴՄԵԺ Իլիւ. Սկզբնական
վիշի.—Կաթիլ. կողմից Կովկասի նոր փոխարքային ուղարկած հեռագիրը և նրա պատասխանը:
Գուրբանյանի գործերը.—Մամուլի վերաբերեալ կարգադրություններ.—Դ Սիմօն Հախումյան,
Լ. Ս., 19 Նամակ Բազումից, Տիգրանի Ռաճաճարի, 20. Գեղարուստի աշխարհից:
21. Արտաքին տեսություն.—Մուշկի տակ.—Անգլիան Մերձավոր արևելքում Լ. Ս. Ի.,
22. Ո՞վ փակեց Թաւրիզի Լիւրա թաղի դպրոցները, Ե. Ժ. Վ. Մուրադյանի, 22, Պարբերա-
կան հրատարակություններ, 23. Սմբագրության կողմից, 24. Պատասխաններ, 24. Յայտա-
բարություններ:

Գրաչափերի գործադուրի պատճառով փետրվարի համարը անկարող եղանք առանձին
գուրս բերել: Իբրև հատուցում բաժանորդներին կը տրվի «Հաջի բաբան Անգլիայում» վեպը:

ПРАВЛЕНИЕ КАВКАЗСКАГО ОБЩЕСТВА


Исправительныхъ земледѣльческо-ремесленныхъ колоній и пріютовъ просить Васъ, Ми-
лостивый Государь, пожаловать въ помѣщеніе Тифлисской Судебной Палаты въ Воскресенье
13-го Марта сего 1905 года, въ 1 часть дня, для участія въ обыкновенномъ Общемъ Соб-
раніи Членовъ Общества.

Предметы замятій

1. Отчетъ о дѣятельности Правленія за 1904 годъ.
 2. Денежный отчетъ Общества за 1904 г.
 3. Очетъ по исправительной колоніи въ Земо-Авчалахъ за 1904 годъ.
 4. Приходорасходная смѣта Общества на 1905 годъ.
 5. Докладъ ревизіонной коммисіи по отчету за 1904 годъ и по смѣтѣ на 1905 г.
 6. Вопросъ объ избраніи 4-хъ членовъ Правленія кандидатовъ и Ревизіонной коммисіи на 1905 годъ.
 7. Докладъ по вопросу объ устройствѣ въ колоніи особаго отдѣленія несовершенно-
лѣтнихъ старшаго возраста.
 8. Единогласное предложеніе Правленія объ избраніи С. Б. Враскаго почетнымъ чле-
номъ Общества, о наименованіи именемъ его одного изъ павильоновъ колоніи и о помѣще-
ніи портрета его въ актовомъ залѣ.
- Примѣчаніе. Общее Собраніе считается состоявшимся при участіи въ немъ не менѣе 20 чле-
новъ (§ 17 устава Общества).

1—2

Ս. Պետերբուրգի մեքենայական արդյունագործության ընկերության
**ԱՄՈՒՐ, ՋԱՇԱԿՈՎ և ԹԵԹԵԻ, ԿԱ-
ՆԱՆՑ, ՏՂԱՄԱՐԴԱՆՑ և ԵՐԵՄԱՆՆԵՐԻ**
ԿՕՇԻԿՆԵՐ,
նոյնպես և սկորթսոյներ ու սանդալներ
կարելի է ստանալ Թիֆլիսում և Անդր-
կովկասի միւս քաղաքներում ՄՄԵՆԱՆԻ
վաճառատներում:



ФАБРИЧНОЕ КЛЕЙМО
С. ПЕТЕРБУРГЪ

Խնդրվում է ուշը դարձնել
ֆաբրիկայի նշանի վրա:

ԼԵՕՊՈԼԴ ՆԷՅՇԵԼԵՐ
Առևտրական տան պահեստում կայ ընտրության համար
մեծ քանակությամբ ռուսական եւ արտասահմանական
արդյունագործության
ԿԱԶՈՒԵՂԵՆԻ ԱՊՐԱՆՔՆԵՐ
Տեղեֆոն № 346. 80—37 Երևանյան հրապարակի վրա: